2025 թ. դեկտեմբերին ընդունված «ԵՄ-Հայաստան գործընկերության նոր ռազմավարական օրակարգը» զարգացնում է ՀԸԳՀ-ի շրջանակը՝ որպես դրա գործառնական հիմք, և արտացոլում է Հայաստանի եվրոպական հավակնությունները: Այն սահմանում է կարճաժամկետ և միջնաժամկետ առաջնահերթություններ ժողովրդավարության, իրավունքի գերակայության, պաշտպանության, էներգետիկ անվտանգության, կապակցվածության, թվային փոխակերպման և սոցիալ-տնտեսական զարգացման ուղղություններով՝ հիմնվելով ԵՄ «Դիմակայունության և աճի ծրագրի» շրջանակում նախատեսված 270 մլն եվրոյի աջակցության վրա: Օրակարգը կարևորում է երկկողմ հանձնառությունները՝ հարաբերությունների խորացման, տարածաշրջանային խաղաղության խթանման գործում և առաջ է մղում Հայաստանի աստիճանական ինտեգրումը ԵՄ շրջանակներում:

Ամփոփելով նշենք, որ ԵՄ-Հայաստան հարաբերությունները թևակոխել են նոր՝ առավել հավակնոտ փուլ, որի շրջանակում ԵՄ կողմից խթանվող բարեփոխումների իրականացումն աստիճանաբար փոխակերպվում է քաղաքական, կառուցվածքային և խորհրդանշական ուղու՝ դեպի ԵՄ ապագա անդամակցություն: Այդ ուղու հաջողությունը պայմանավորված է Հայաստանի ներքին ինստիտուցիոնալ բարեփոխումների հետևողականությամբ, ԵՄ շարունակական աջակցությամբ և կողմերի միջև ընդհանուր ռազմավարական տեսլականի առկայությամբ:



Սակայն 2013 թ. սեպտեմբերին Մոսկվա կատարած այցի ընթացքում, նախագահ Սերժ Սարգսյանը, հղում կատարելով անվտանգության նկատառումներին և Ռուսաստանի հետ առավել սերտ տնտեսական կապերի անհրաժեշտությանը, հայտարարեց, որ Հայաստանը չի ստորագրելու արդեն իսկ հաջողությամբ բանակցված «Ասոցացման համաձայնագիրը», այլ կմիանա Ռուսաստանի գլխավորությամբ գործող Մաքսային միությանը (հետագայում վերանվանված՝ Եվրասիական տնտեսական միություն)<sup>8</sup>: Սա անակնկալի բերեց և լուրջ հիասթափություն առաջացրեց արևմտամետ հայերի շրջանում, որոնց թիվը, սակայն, մեծ չէր: Զարմանալիորեն, այդ ժամանակաշրջանում ԵՄ քաղաքացիական հասարակության հիմնական կառուցվածքը Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային հարթակը, գրեթե չէր համարվում այդ շրջանակի մաս: Ավելին, այդ հարթակի ազգային համակարգողը հանդես էր գալիս ոչ իրատեսական կանխատեսումներով՝ պնդելով, որ Հայաստանը փաստացի չի միանալու Ռուսաստանի գլխավորությամբ գործող Մաքսային միությանը, կամ եթե անգամ միանա, ապա այդ կառույցը (Մաքսային միությունը) երկար կյանք չի ունենալու<sup>9</sup>:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է բարձր գնահատել ԵՄ կողմի հետևողական աջակցությունը Հայաստանին՝ անգամ 2013 թ. սեպտեմբերին հայկական իշխանությունների կողմից «Ասոցացման համաձայնագիր» ստորագրումից հրաժարվելուց հետո առաջացած հիասթափության պայմաններում:

Կառավարությանը տարբեր ոլորտներում շարունակական աջակցությանը զուգահեռ՝ ԵՄ-ն էական աջակցություն է տրամադրել նաև հայաստանյան քաղաքացիական հասարակությանը և ժողովրդավարական գործընթացների ակտիվիստներին այն ժամանակահատվածում, որը հաջորդել է Հայաստանի աշխարհաքաղաքական կտրուկ շրջադարձին և նախորդել է 2018 թ. Թավշյա հեղափոխությանը: ԵՄ այդ ներդրումները նշանակալի էին՝ նպաստելով Հայաստանի՝ որպես ժողովրդավարական պետության կայացման գործընթացին, որտեղ հարգվում են մարդու իրավունքները և իրավունքի գերակայությունը: Այդ աջակցությունն ուղղված էր, ի թիվս այլնի, ընտրական համակարգի կատարելագործմանը՝ աջակցելով քվեարկության կազմակերպման համար անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումների ձեռքբերմանը և միջազգային չափանիշներին համապատասխան ընտրությունների վարչարարության բարելավմանը՝ խթանելով ընտրական օրենսդրության բարելավման նպատակով քաղաքական և քաղաքացիական հասարակության դերակատարների միջև փոխանակումները, ինչպես նաև աջակցելով տեղական քաղաքացիական նախաձեռնություններին և կոալիցիաներին, որոնք ներգրավված էին ընտրությունների ներքին մշտադիտարկման գործընթացներում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի անսպասելի աշխարհաքաղաքական շրջադարձից հետո ընդհանուր եզրեր գտնելու և Հայաստանի՝ ԵՄ ինտեգրման գործընթացը նոր կետից վերսկսելու համար թե՛ ԵՄ-ի, թե՛ Հայաստանի դիվանագետների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կողմից պահանջվեցին զգալի ջանքեր: Այդ վերսկսումն իրականացվել է նոր համագործակցության շրջանակի՝ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր» (ՀԸԳՀ/CEPA) մշակման միջոցով, որը պահպանել է նախկինում հաջողությամբ բանակցված «Ասոցացման համաձայնագիր» բազմաթիվ բաղադրիչներ՝ բացառությամբ «Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու» (DCFTA) վերաբերյալ մասը: ՀԸԳՀ-ն վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2018 թ. ապրիլի 11-ին՝ ՀՀ ներկայիս վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ մեկնարկող բողոքի գործողություններից օրեր առաջ, որոնք հանգուցալուծվեցին 2018 թ. Թավշյա հեղափոխությամբ՝ հանգեցնելով այն ժամանակվա վարչապետ Սերժ Սարգսյանի խաղաղ հեռացմանը պաշտոնից և Կառավարության ամբողջական կազմի փոփոխությանը:

Ինչ վերաբերում է Հայաստանի աշխարհաքաղաքական շրջադարձին, որը հիմնավորվում էր հիմնականում անվտանգության նկատառումներով, ապա ակնհայտ է, որ նման նկատառումները կապված էին Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ: Հայկական կողմի ակնկալիքն այն էր, որ Ռուսաստանը դիվանագիտական ուղիներով թույլ չի տա ապագայում պատերազմ Հայաստանի և Ադրբեյջանի միջև՝ ապահովելով անհրաժեշտ սպառազինության մատակարարում Հայաստանին

8 St' u' <https://www.civilnet.am/en/news/390463/armenia-squanders-european-integration-processes/>  
9 Այդ թվում Հայաստանի ազգային հարթակի նախկին համակարգող Բորիս Նավասարդյանի հայտարարությունները՝ <https://text.am/en/news/2013/10/29/navasardyan/904906> և <https://news.am/eng/print/news/242206.html>

և աջակցելով հայկական կողմին այն դեպքում, եթե Ադրբեյջանը, այնուամենայնիվ, սկսի ռազմական գործողություններ: Սակայն հետագա զարգացումները, մասնավորապես՝ Ադրբեյջանի կողմից 2020 թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի դեմ իրականացված լայնածավալ հարձակումը, ցույց տվեցին, որ Ռուսաստանը տվյալ հակամարտության շրջանակում նվազագույնը շահագրգռված չէր Հայաստանին աջակցելու հարցում<sup>10</sup>: Ռուսական կողմը փաստացի հայտարարեց, որ պատրաստ է աջակցություն ցուցաբերել Հայաստանին միայն այն դեպքում, եթե ռազմական գործողությունները ծավալվեն Հայաստանի Հանրապետության տարածքում: Սակայն երբ ադրբեյջանական ռազմական գործողությունները 2021–2022 թթ. փաստացի ծավալվեցին Հայաստանի արևելյան և հարավային հատվածներում՝ ներառյալ Գեղարքունիքում, Վայոց Ձորում և Սյունիքում, Ռուսաստանի արձագանքը դարձավ էլ ավելի անհամաչափ՝ սահմանափակվելով ընդամենը «Հայաստան–Ադրբեյջան սահմանին լարվածության» վերաբերյալ մտահոգության արտահայտումով<sup>11</sup>:

Ադրբեյջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սկսված 44-օրյա պատերազմից, 2021–2022 թթ. Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի դեմ իրականացված մի շարք ռազմական հարձակումներից, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի երկարատև շրջափակման հետևանքով առաջացած հումանիտար ճգնաժամից և Լեռնային Ղարաբաղից ավելի քան 115.000 հայերի հարկադիր տեղահանությունից հետո, Եվրոպական միությունը հայտարարեց Հայաստանին ավելի ուժեղ աջակցություն ցուցաբերելու իր մտադրության մասին: Հայ հասարակությունն իր հերթին մտավ հետպատերազմական «հետցնցումային» վերարժևորման և վերափոխապատկերման փուլ, որը ներառում էր նաև Հայաստանի գործընկերների դերի վերագնահատում՝ այդ թվում՝ «ռազմավարական» գործընկեր համարվող Ռուսաստանի դերի՝ Հայաստանի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և ժողովրդավարության ամրապնդման համատեքստում:

Հայ ժողովրդի՝ ԵՄ ինտեգրման առավել խորացման, այդ թվում՝ ԵՄ անդամակցության ուղղությամբ ձգտումները ձևակերպելու գործում կարևոր դեր ունեցավ «Հայաստանի Հանրապետության՝ Եվրոպական միությանը անդամակցության գործընթացի մեկնարկի մասին» օրենքը<sup>12</sup>, որը միավորեց Հայաստանի ժողովրդավարական քաղաքացիական հասարակությանն ու քաղաքական ուժերին՝ ներառյալ պետական կառավարման համակարգում ներգրավված դերակատարներին, և հնարավորություն տվեց հստակ ձևով հայտարարել Հայաստանի Եվրոպական ապագայի նկատմամբ աներկբա աջակցություն: Այդ օրենքը և երկրի ժողովրդավարական առաջընթացի հետագա դրսևորումները հանգեցրել են նրան, որ ԵՄ ներսում բազմաթիվ դերակատարներ Հայաստանին դիտարկում են որպես թեկնածու երկրների «եռյակի» շրջանակում գտնվող պետություն՝ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը պաշտոնապես թեկնածու երկրի կարգավիճակ չունի: Հետագա զարգացումները մեծապես կախված կլինեն տեղական դերակատարների քաղաքական հասունությունից, ինչպես նաև ԵՄ կարողությունից՝ ստեղծարար և ճկուն մոտեցումներով հայտարարված մտադրությունները վերածելու կոնկրետ գործողությունների և նպատակաուղղված ջանքերի՝ ակնկալվող վերջնարդյունքին հասնելու համար:

10 Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պատասխանը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նամակին (31.10.2020)՝ <https://a1plus.am/ru/article/384094>  
11 ՌԴ ԱԳՆ հայտարարություն (13.09.2022)՝ [https://azerbaijan.mid.ru/ru/news/zayavlenie\\_mid\\_rossii\\_v\\_svyazi\\_s\\_eskalatsiey\\_napryazhennosti\\_mezhdu\\_azerbaydzhanom\\_i\\_armeniye/](https://azerbaijan.mid.ru/ru/news/zayavlenie_mid_rossii_v_svyazi_s_eskalatsiey_napryazhennosti_mezhdu_azerbaydzhanom_i_armeniye/)  
12 Խորհրդարանական քննարկման մասին հավելյալ տեղեկությունների համար տես՝ [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=21729&year=2025&month=02&day=11&lang=eng](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=21729&year=2025&month=02&day=11&lang=eng)

# Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր

«Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր» (ՀԸԳՀ/CEPA) ժամանակավոր կիրառումը մեկնարկել է 2018 թ. հունիսին, իսկ ամբողջությամբ այն ուժի մեջ է մտել 2021 թ. մարտի 1-ին՝ Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների կողմից իրականացված վավերացման գործընթացի ավարտից հետո: Համաձայնագիրը հանդիսանում է ԵՄ–Հայաստան ներկա գործընկերության իրավական հիմքը՝ փոխարինելով նախկին «Գործընկերության և համագործակցության համաձայնագրին», որը գործում էր 1999 թ.-ից: ՀԸԳՀ-ն բնութագրվում է որպես Հայաստանի համար «բարեփոխումներ գեներացնող գործիք»<sup>13</sup> հանդիսանալով ԵՄ–Հայաստան գործընկերության ամրապնդման կարևոր հենք և Հայաստանի առաջընթացը խթանող փաստաթուղթ, որը ազդեցություն ունի նաև քաղաքացիների կյանքի վրա<sup>14</sup>: Այն ոչ միայն երկու գործընկերների միջև շրջանակային համաձայնագիր է, այլ նախնառաջ խթան (կատալիզատոր) Հայաստանի իրական ժողովրդավարական պետություն դառնալու և ԵՄ անդամակցության ուղղությամբ առաջ շարժվելու համար<sup>15</sup>:

ՀԸԳՀ-ն ժամկետով չսահմանափակված համաձայնագիր է, որի նպատակն է ամրապնդել ԵՄ–Հայաստան համագործակցությունը, խթանել ժողովրդավարական սկզբունքները, տնտեսական աճը և համապատասխանեցումը միջազգային, այդ թվում՝ ԵՄ չափանիշներին: Այն ընդգրկում է բարեփոխումների մի շարք ոլորտներ՝ ներառյալ արդարադատությունը, միգրացիան, տրանսպորտը, էներգետիկան, շրջակա միջավայրը, կլիմայական քաղաքականությունը, սպառողների իրավունքների պաշտպանությունը, առողջապահությունը, առևտուրը, կրթությունը, տեղեկատվական հասարակությունը, զբաղվածությունը և այլն: Համաձայնագիրը նախատեսում է մինչև 2029 թվականը Հայաստանի ներպետական օրենսդրության մոտարկում շուրջ 250 ԵՄ դիրեկտիվների, կանոնակարգերի կամ այլ իրավական ակտերի հետ:

ՀԸԳՀ-ի վերահսկողության և մոնիթորինգի ինստիտուցիոնալ շրջանակը ձևավորում են հետևյալ մարմինները.

**1. Գործընկերության խորհուրդը** ներառում է ԵՄ-ի և Հայաստանի ներկայացուցիչներին նախարարների մակարդակով: Խորհուրդը ՀԸԳՀ-ի ղեկավարող մարմինն է և պարբերաբար գումարվող նիստերի ընթացքում, տարեկան կիրարկման հաշվետվության, ինչպես նաև Գործընկերության հանձնաժողովի համապատասխան զեկույցների հիման վրա, այն վերանայում է ՀԸԳՀ-ի իրականացմանը ընթացքը: Խորհրդի համանախագահներն են ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչը և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:

**2. Գործընկերության հանձնաժողովը** բաղկացած է կողմերի ներկայացուցիչներից՝ ավագ պաշտոնատար անձանց մակարդակով: Այն աջակցում է Գործընկերության խորհրդին իր լիազորությունների իրականացման գործում: Հանձնաժողովը նիստ է գումարում/տարեկան առնվազն մեկ անգամ և վերահսկում է տարբեր ենթահանձնաժողովների և այլ մարմինների աշխատանքը (որոնք անհրաժեշտության դեպքում ստեղծվում են Գործընկերության խորհրդի կողմից՝ առանձին ոլորտներում ՀԸԳՀ-ի կիրարկման գործառնություններ կատարելու նպատակով): Վերջիններս հիմնականում կենտրոնացած են ոլորտային հարցերի մոնիթորինգի և հաշվետվության պատրաստման վրա:

13 ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը Եվրոպական խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովում (04.03.2019)՝ <https://www.primeminister.am/en/press-release/item/2019/03/04/Nikol-Pashinyan-Speech/>  
14 Փոխվարչապետ Գրիգորյանի ելույթը ՀԸԳՀ-ի ստորագրման 7-րդ տարեդարձի առթիվ (22.11.2024)՝ <https://www.gov.am/en/news/item/10600/>  
15 ԵՄ-Հայաստան Քաղաքացիական հասարակության հարթակի 6-րդ համատեղ հռչակագիր (09.04.2025)՝ <https://eu-armenia.am/english/6th-joint-declaration-of-eu-am-civil-society-platform>

**3. Խորհրդարանական գործընկերության հանձնաժողովը** Եվրոպական և հայկական խորհրդարանների կողմից ստեղծված մարմին է, որը կազմված է ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորներից: Այն որոշակի պարբերականությամբ գումարում է իր աշխատանքները՝ ՀԸԳՀ-ի և ԵՄ–Հայաստան հարաբերությունների տարբեր ասպեկտների շուրջ տեսակետների փոխանակման և դրա վերաբերյալ Գործընկերության խորհրդին առաջարկություններ ներկայացնելու նպատակով<sup>16</sup>:


**4. ԵՄ–Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակը** ներառում է ինչպես ԵՄ, այնպես էլ Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ այդ թվում հասարակական կազմակերպություններ, արհմիություններ և գործատուների կազմակերպություններ: Այն ստեղծվել է ՀԸԳՀ-ի ներքո՝ ՀԸԳՀ-ի կիրարկման առաջընթացի շուրջ հանդիպումներ անցկացնելու և տեսակետներ փոխանակելու նպատակով: Հարթակը գործում է 2023 թվականից՝ տարվա ընթացքում երկու անգամ նիստ գումարելով<sup>17</sup> և հրապարակելով առաջարկություններ, խորհրդատվական կարծիքներ և զեկույցներ՝ ՀԸԳՀ-ի կիրարկման առաջընթացի, ինչպես նաև ԵՄ–Հայաստան համագործակցության այլ ուղղությունների վերաբերյալ<sup>18</sup>:

**5.** Ներքին ինստիտուցիոնալ մակարդակում ՀՀ Կառավարությունը ստեղծել է միջգերատեսչական հանձնաժողով՝ փոխվարչապետի նախագահությամբ, որի նպատակն է համակարգել ՀԸԳՀ-ի կիրարկումը՝ դրա ճանապարհային քարտեզին համապատասխան: ՀԸԳՀ-ի կիրարկման գործող ճանապարհային քարտեզը ներառում է ավելի քան 20 ոլորտներում 405 միջոցառումներ և բաղկացած է երկու հավելվածից<sup>19</sup>: ԵՄ-Հայաստան Քաղաքացիական հասարակության հարթակի առաջարկությամբ ՀՀ Կառավարության կողմից մշակվել է ճանապարհային քարտեզի նոր տարբերակ, որը դեռևս ենթակա է հաստատման և դեռ չի ներկայացվել շահագրգիռ կողմերին և հանրությանը:


ՀԸԳՀ-ի կիրառման պահանջները ենթադրում են կողմերի միջև համագործակցություն տարբեր ոլորտների զարգացման, արդիականացման և բարեփոխման ուղղությամբ: Որոշ դեպքերում այդ համագործակցությունը կենտրոնացած է միջազգային չափանիշների և կոնվենցիաների հետ համապատասխանեցման վրա՝ մասնավորապես՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ/ILO), Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ/WTO) և Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ/WHO) չափանիշների շրջանակում: Ավելի խորքային մակարդակում համաձայնագիրը պահանջում է մոտարկում ԵՄ իրավական ակտերի ամբողջությանը (EU acqvis) ութ առանցքային ոլորտներում՝ տրանսպորտ, էներգետիկա (ներառյալ միջուկային անվտանգության ոլորտում համագործակցությունը), շրջակա միջավայր, կլիմայի գործողություններ, սպառողների իրավունքների պաշտպանություն, տեղեկատվական հասարակություն, աշխատանք և աշխատավայրում առողջության պահպանում, ինչպես նաև անօրեն գործողությունների/խարդախությունների կանխարգելում և դրանց դեմ ուղղված/հակախարդախային միջոցառումներ: Դրանք դիտարկվում են որպես ԵՄ իրավունքի և քաղաքականությունների հետ մոտարկման առաջնահերթ ոլորտներ՝ սահմանված ժամանակահատվածների շրջանակում, որոնք հիմնականում տատանվում են 1-ից մինչև 8 տարի, իսկ հինգ առանցքային ոլորտներում վերջնաժամկետ է սահմանված 2026 թվականը: Միևնույն ժամանակ, երեք ոլորտներում՝ (տեղեկատվական հասարակություն, զբաղվածություն, սոցիալական քաղաքականություն և հավասար հնարավորություններ, ինչպես նաև (iii) կլիմայական քաղաքականություն) որպես առավելագույն վերջնաժամկետներ համապատասխանաբար սահմանված են 2026, 2028 և 2029 թվականները:

16 Տե՛ս, օրինակ, ԵՄ–Հայաստան Խորհրդարանական գործընկերության հանձնաժողովի Եզրափակիչ հայտարարությունն ու առաջարկությունները (25.02.2025):  
17 Տե՛ս ԵՄ–Հայաստան Քաղաքացիական հասարակության հարթակի հռչակագրերն ու հայտարարությունները՝ 2023 թվականից սկսած՝ <https://eu-armenia.am/english>  
18 Տե՛ս ԵՄ–Հայաստան Քաղաքացիական հասարակության հարթակի զեկույցները՝ 2023 թվականից սկսած՝ <https://eu-armenia.am/%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D5%B6%D5%A5%D6%80#18ad5a83-e59b-4de3-a768-451c513c7c7b>  
19 Տե՛ս ՀՀ վարչապետի N 666-Լ որոշումը (01.06.2019) և ՀՀ վարչապետի N 587-Լ որոշումը (31.05.2021)՝ <https://www.arlis.am/hy/acts/153164>

Կառավարության ներկայացրած տվյալների համաձայն՝ 2024 թվականի ավարտի դրությամբ **ՀԸԳՀ-ի Կիրարկման ճանապարհային քարտեզի 1-ին հավելվածում** ներառված 197 միջոցառումներից (որոնց վերջնաժամկետները սահմանված էին մինչև 2024 թ.) 58%-ը համարվում է իրականացված/կատարված (114 միջոցառում), իսկ 4%-ի (8 միջոցառում) իրականացումը դեռևս չի մեկնարկել: Այսպիսով, մնացյալ 38%-ը (75 միջոցառում) գտնվում է իրականացման փուլում: Իրականացված միջոցառումների առավել մեծ թիվը գրանցվել է շրջակա միջավայրի ոլորտում (ընդհանուր՝ 113 միջոցառում, որոնցից 65-ը՝ իրականացված, 27-ը՝ ընթացքի մեջ, 17-ը՝ մասնակի կատարված, իսկ 4-ի իրականացումը դեռ չի մեկնարկել), այնուհետև՝ տրանսպորտի ոլորտում (29 միջոցառումից՝ 12-ը իրականացված, 11-ը՝ ընթացքի մեջ, 2-ը՝ մասնակի կատարված, 4-ի իրականացումը դեռ չի մեկնարկել), էներգետիկայի ոլորտում (14 միջոցառումից՝ 6-ը իրականացված, 8-ը ընթացքի մեջ), ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում (13 միջոցառումից՝ 8-ը իրականացված, 5-ը ընթացքի մեջ):



PROGRESS PER AREA IN %




Ըստ առկա տեղեկատվության՝ միջոցառումների իրականացումն ամբողջությամբ ավարտված է երկու ոլորտներում՝ քաղաքական երկխոսություն (4 ավարտված միջոցառում) և գյուղատնտեսություն (1 միջոցառում): Միգրացիայի (1 իրականացված և 1 ընթացքի մեջ գտնվող միջոցառում) և տարածքային/մարզային զարգացման (2 իրականացված և 1 ընթացքի մեջ գտնվող միջոցառում) ոլորտներում ևս արձանագրվել է էական առաջընթաց՝ հաշվի առնելով, որ ընթացքի մեջ գտնվող միջոցառումները շարունակական բնույթ ունեն: Արդարադատության, ազատության և անվտանգության, ինչպես նաև կլիմայի գործողությունների ոլորտներում միջոցառումների իրականացումն ըստ հաղորդված տվյալների կազմում է 88%:


**ՀԸԳՀ-ի Կիրարկման ճանապարհային քարտեզի 2-րդ հավելվածը** ներառում է 93 միջոցառում, որոնց վերջնաժամկետները սահմանված են մինչև 2024 թվականի ավարտը: Տվյալների համաձայն՝ միջոցառումների 49.5%-ը (ընդհանուր՝ 47 միջոցառում) համարվում է իրականացված կամ կատարված, 43%-ը (39 միջոցառում) գտնվում է ընթացքի մեջ կամ մասնակի է կատարված, իսկ 7.5%-ը (7 միջոցառում) դեռևս չի մեկնարկել:

2-րդ հավելվածի շրջանակում իրականացված միջոցառումների առավել մեծ թիվը վերաբերում է վիճակագրության ոլորտին՝ 10 միջոցառում, ինչը կազմում է տվյալ ոլորտի ճանապարհային քարտեզով նախատեսված միջոցառումների 100%-ը: Այնուհետև՝ առողջապահության ոլորտն է՝ 18 իրականացված միջոցառում, որը կազմում է առողջապահությանն առնչվող գործողությունների 95%-ը (ընդհանուր՝ 19 միջոցառումից): Կրթության, վերապատրաստման և երիտասարդության ոլորտում իրականացվել է 5 միջոցառում, ինչը կազմում է տվյալ ոլորտի ճանապարհային քարտեզով նախատեսված միջոցառումների 33%-ը:

Ըստ ներկայացված տվյալների՝ իրականացումն ամբողջությամբ ավարտված է վիճակագրության ոլորտում, իսկ առողջապահության ոլորտում՝ 95%-ով: Այլ ոլորտներում գրանցված իրականացվածության մակարդակներն են՝ զբաղվածություն, սոցիալական քաղաքականություն և հավասար հնարավորություններ՝ 67% (3 միջոցառումից 2-ը՝ իրականացված), տնտեսական համագործակցություն՝ 60% (5 միջոցառումից 3-ը՝ իրականացված), քաղաքացիական պաշտպանություն՝ 57% (7 միջոցառումից 4-ը՝ իրականացված) և մշակույթ՝ 40% (5 միջոցառումից 2-ը՝ իրականացված): Ի հակադրումն դրա՝ կրթության և վերապատրաստման ոլորտում միջոցառումների 67%-ը (15 միջոցառումից 10-ը) կա՛մ գտնվում է ընթացքի մեջ (5 միջոցառում), կա՛մ դեռևս չի մեկնարկել (5 միջոցառում), մինչդեռ միայն 33%-ը (15 միջոցառումից 5-ը) հաղորդվում է որպես իրականացված:



PROGRESS PER AREA IN %



Հետազոտությունների, տեխնոլոգիական զարգացման և նորարարության ոլորտում ներառված բոլոր 4 միջոցառումները հաղորդվում են որպես ընթացքի մեջ գտնվող:

Երիտասարդությանն առնչվող համագործակցության շրջանակում միջոցառումների 50%-ը (2 միջոցառում) դեռևս չի մեկնարկել, մինչդեռ մնացյալ 50%-ը (2 միջոցառում) գտնվում է իրականացման փուլում: Տարածքային զարգացման, սահմանային և տարածաշրջանային մակարդակի համագործակցության ոլորտում 3 միջոցառում (75%) ընթացքի մեջ է և միայն մեկ միջոցառում է իրականացված:

Միջուկային անվտանգության ոլորտում 3 միջոցառում հաղորդվում է որպես ընթացքի մեջ գտնվող բոլորն էլ 2024 թվականի վերջնաժամկետներով: Արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում քաղաքական երկխոսության, բարեփոխումների և համագործակցության ուղղությամբ ընդհանուր առմամբ 4 միջոցառում հաղորդվում է որպես ընթացքի մեջ գտնվող, որոնցից երեքը շարունակական բնույթ ունեն: Արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտում հաղորդվում է 2 ընթացքի մեջ գտնվող միջոցառման մասին, որոնցից մեկը շարունակական բնույթի է:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2025 թվականի սկզբին հայտարարել էր ՀՀԳՀ-ի իրականացման վերաբերյալ համապարփակ զեկույց հրապարակելու մտադրության մասին: Միայն այդ զեկույցի հրապարակումից հետո հնարավոր կլինի իրականացնել ՀՀԳՀ-ի իրականացման խորքային մոնիթորինգ՝ պարզելու համար, թե արդյոք հաղորդված քանակական իրականացվածության ցուցանիշները, ինչպես նաև դրանց իրականացման որակական կողմը կարող են գնահատվել որպես չափանիշներին համապատասխանող:

Քաղաքացիական հասարակության կողմից ՀՀԳՀ-ի կիրարկման առաջընթացի գնահատման առնչությամբ հարկ է նշել, որ մինչև այն պահը, երբ Հարթակը ստեղծվեց 2022 թվականին, Կառավարության կողմից հաստատված ճանապարհային քարտեզի երկու հավելվածներն արդեն ընդունված էին: Պետք է նաև արձանագրել, որ երկուսն էլ չունեին համապարփակ մոտեցում: Դրանք ընդունվել են մի գործընթացի շրջանակում, որը ղեկավարվել է հետհեղափոխական շրջանի երկրորդ Արդարադատության նախարարի կողմից՝ ՀՀԳՀ-ի ճանապարհային քարտեզի ընդունման գործընթացի դանդաղ ընթանալու առնչությամբ նախորդ նախարարի նկատմամբ հնչեցված բավական կոշտ քննադատությունից հետո: Առաջին հավելվածն ընդունվել է 2019 թվականի ամռանը՝ քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցությունների ոչ բավարար մակարդակի պայմաններում: Ինչ վերաբերում է երկրորդ հավելվածին, ապա թեև այն գրավոր շրջանառվել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շրջանում, սակայն որևէ հանդիպում չի անցկացվել՝ առաջարկվող գործողությունների բովանդակությունը և ժամանակացույցը քննարկելու նպատակով: Ավելին՝ այդ գործընթացը ժամանակային առումով համընկել է 2020 թվականի պատերազմի ավարտի հետ, որում հայկական կողմը կրել էր պարտություն, իսկ քաղաքացիական հասարակությունը իր ջանքերն էր կենտրոնացրել հայ ռազմագերիների ազատ արձակման խնդիրների վրա: Հետպատերազմական ժամանակաշրջանում շարունակվում էին նաև Ադրբեյջանի հարձակողական գործողությունները և 2021 թվականի սկզբին երկրում առկա էր քաղաքական անկայունություն:

Այնուամենայնիվ, 2023 թվականից սկսած՝ հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունները՝ ԵՄ–Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակի առաջնորդությամբ, տարբեր առիթներով ընդգծել են ՀՀԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզի համապարփակ թարմացման անհրաժեշտությունը, առանց որի հնարավոր չէ իրականացնել ՀՀԳՀ-ի իրականացման ամբողջական մոնիթորինգ<sup>20</sup>: Նման պահանջներին զուգահեռ՝ Հարթակը քաղաքացիական հասարակության լայն շրջանակներին ներգրավել է ՀՀԳՀ-ի կիրարկման մոնիթորինգի աշխատանքներում՝ քաղաքացիական հասարակության կողմից առաջնահերթ համարվող ընտրված ոլորտներում: 2022–2025 թվականներին Հարթակը դիտարկել է ՀՀԳՀ-ից բխող բարեփոխումների առաջընթացը ժողովրդավարության ամրապնդման, իրավունքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության (ներառյալ՝ աշխատանքային իրավունքների), կրթության, վիզաների ազատականացման, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և մի շարք այլ ուղղություններով: Սակայն ֆինանսավորման անբավարարության պատճառով Հարթակը հնարավորություն չի ունեցել իրականացնել Հայաստանի իշխանությունների կողմից ՀՀԳՀ-ի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման լիարժեք և լայնածավալ մոնիթորինգ: Միաժամանակ առկա է եղել նաև մոտեցումների տարբերություն այն հարցի շուրջ, թե քաղաքացիական հասարակությունն ինչն է ընկալել որպես Կառավարության պարտավորություն ՀՀԳՀ-ի ներքո և ինչպիսին է եղել այդ պարտավորությունների վերաբերյալ Կառավարության ընկալումը: Հարթակը լիահույս է, որ թարմացված ճանապարհային քարտեզը կնպաստի այդ ընկալումների համադրմանը և միասնականացմանը:

Կառավարության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզի թարմացման գործընթացն ավարտվել է 2025 թվականի դեկտեմբերին: Թեև քաղաքացիական հասարակության հետ նախագծի քննարկման նպատակով հատուկ հանդիպումներ չեն գումարվել, այնուամենայնիվ 2025 թվականի հոկտեմբերին ԵՄ–Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակից և Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի ազգային հարթակից երկուական ներկայացուցիչներ հրավիրվել են նախագծի եզրափակիչ քննարկմանը, որը տեղի է ունեցել փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի նախագահությամբ գործող միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում: Կառավարությունը հավաստիացնում է, որ թարմացման գործընթացում հաշվի են առնվել ԵՄ–Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակի՝ 2023–2025 թվականներին հրապարակված խորհրդատվական կարծիքներում և զեկույցներում ներկայացված առաջարկությունները: Ճանապարհային քարտեզի հրապարակումը նախատեսվում է 2026 թվականի մարտին:

20. Տե՛ս ԵՄ–Հայաստան Քաղաքացիական հասարակության հարթակի 2023 թ. տարեկան զեկույցը՝ <https://eu-armenia.am/%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D5%B6%D5%A5%D6%80>

Բացի ճանապարհային քարտեզի հնացած լինելու խնդրից, առկա է նաև պետական գերատեսչություններում ինստիտուցիոնալ հիշողության, կարողությունների և մասնագիտական ոլորտային փորձագիտության անբավարար մակարդակի հիմնահարց: Մինչև 2025 թվականի ավարտը ոլորտային նախարարություններում ԵՄ ինտեգրման հարցերով մասնագիտացված ստորաբաժանումներ չեն գործել, և այդ ժամանակահատվածում միայն Արտաքին գործերի նախարարությունում ստեղծվել է Եվրոպական ինտեգրման վարչություն<sup>21</sup>: Նմանատիպ ստորաբաժանում ստեղծելու մտադրություն կա նաև Արդարադատության նախարարությունում, թեև նշված նախարարության առջև ծառայած խնդիրները չեն սահմանափակվում միայն Եվրոպական ինտեգրման վարչության բացակայությամբ: Արդարադատության նախարարությունը 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո ունեցել է 5 նախարար, ինչը բարդացրել է աշխատանքների շարունակականությունը՝ այդ թվում՝ ՀԸԳՀ-ի կիրարկման համատեքստում: Միևնույն ժամանակ, նախարարությունն իրականացնում է առանցքային գործառույթ՝ ՀԸԳՀ-ից բխող բարեփոխումների օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի հիմնական մասի մշակման ուղղությամբ՝ ներառյալ ինչպես նախորդ, այնպես էլ թարմացված ճանապարհային քարտեզի մշակումը: Ի լրումն դրան, պետք է նշել, որ համակարգող փոխվարչապետի աշխատակազմը նույնպես թերի է համալրված և չունի բավարար իրավական հմտություններ և մասնագիտական կարողություններ, մինչդեռ փոխվարչապետին վերապահված է մի շարք ոլորտների կորդինացիան՝ ներառյալ Եվրասիական տնտեսական միության, ինչպես նաև ՀԸԳՀ-ի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման համակարգումը:

Եվրոպական միությունը ստանձնել է հանձնառություն տրամադրելու փորձագիտական աջակցություն ոլորտային թիրախային նախագծերի միջոցով<sup>22</sup>: Սակայն մինչ այս պահը այդօրինակ աջակցությունը արդյունավետության և արդյունքաբերության առումով լիարժեք չի համապատասխանում ինչպես կառավարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության կարիքներին:

## ԵՄ-Հայաստան գործընկերության առավել ամրապնդման նոր խթանը

Լեռնային Ղարաբաղից ավելի քան 115.000 էթնիկ հայերի բռնի տեղահանությունից հետո, որը տեղի ունեցավ 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի լայնածավալ ռազմական հարձակման հետևանքով (Լաչինի միջանցքի՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև միակ ցամաքային կապը ապահովող երթուղու, շուրջ մեկ տարի տևած շրջափակումից հետո), Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրավիրվեց մասնակցելու Եվրոպական քաղաքական համայնքի հետ հանդիպմանը, որը տեղի ունեցավ 2023 թ. հոկտեմբերի 5-ին: Հանդիպման շրջանակներում, Եվրոպական հանձնաժողովի նախագահը և Հայաստանի վարչապետն արտահայտեցին իրենց վճռականությունը՝ ամրապնդելու տնտեսական կապերը և լիարժեք իրացնելու ՀԸԳՀ-ում արտացոլված ԵՄ-Հայաստան գործընկերության ներուժը<sup>23</sup>:

Դրանից հետո՝ 2023 թ. հոկտեմբերի 17-ին, վարչապետ Նիկոլ Փաշինյանը ելույթ ունեցավ Եվրոպական խորհրդարանում՝ նշելով, որ «Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է այնքան մոտ լինել Եվրոպական միությանը, որքան Եվրոպական միությունը դա հնարավոր կհամարի»<sup>24</sup>:

Սա փաստացի ազդարարեց Նիկոլ Փաշինյանի վարչակազմի կողմից «հավասարակշռման» կամ «բազմավեկտոր» արտաքին քաղաքական մոտեցման մեկնարկը, որը պայմանավորված էր Ռուսաստանի հանդեպ Հայաստանի աճող հիասթափությամբ՝ հաշվի առնելով Ռուսաստանի հրաժարումը դատապարտելու Ադրբեջանի կողմից 2022 թ. սեպտեմբերին Հայաստանի

21 Միայն 2025 թ. հոկտեմբերին ՀՀ ԱԳՆ-ում ստեղծվեց Եվրոպական ինտեգրման վարչություն՝ <https://armenpress.am/en/article/1231438>  
22  
23 Տե՛ս Նիկոլ Փաշինյանի և Ուրսուլա Ֆոն դեր Լայենի համատեղ հայտարարությունը (05.10.2023)՝ <https://www.primeminister.am/en/press-release/item/2023/10/05/Nikol-Pashinyan-Statement/>  
24 Տե՛ս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը Եվրոպական խորհրդարանում՝ <https://www.primeminister.am/en/statements-and-messages/item/2023/10/17/Nikol-Pashinyan-Speech/>

Հանրապետության ինքնիշխան տարածք ներխուժումը, և հատկապես՝ 2023 թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում խաղաղապահ առաքելության շրջանակներում իր մանդատը գործնականում չկատարելը, ինչը հանգեցրեց ավելի քան 115.000 հայերի բռնի տեղահանությանն իրենց հայրենիքից: Այդ իրողությունը փաստացի ազդարարեց մի գործընթացի մեկնարկ, որի շրջանակներում Հայաստանը, հեռանալով միայն Ռուսաստանից բացառիկ կախվածությունից և այդ նպատակով դիվերսիֆիկացնելով իր գործընկերությունների շրջանակը՝ նպատակ էր հետապնդում ամրապնդել իր ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և ապահովել տնտեսական աճ: Այս քաղաքականությունը ներառում էր կապերի խորացում ԱՄՆ-ի, Եվրոպական միության, Իրանի, Հնդկաստանի և Չինաստանի հետ՝ միաժամանակ ուղղակի բանակցությունների էական ջանքեր գործադրելով Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:

ԵՄ-ի հետ քննարկումներին հաջորդեց ԵՄ խորհրդի՝ 2023 թ. հունվարի 23-ի որոշումը, որով որոշվեց՝

1. ամրապնդել Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելությունը (EUMA)՝ Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության (CSDP) շրջանակներում՝ ավելացնելով դիտորդների և պարեկների թիվը, այդ թվում՝ զգայուն տարածաշրջաններում,
2. դիտարկել Հայաստանի համար ոչ մահաբեր աջակցություն տրամադրելու հնարավորությունը Եվրոպական խաղաղության գործիքի (EPF) շրջանակներում,
3. սկսել ուսումնասիրել վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկի հնարավորությունները,
4. նույնականացնել հավելյալ աջակցման միջոցառումներ՝ Եվրոպական հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումների և Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության (EEAS) համատեղ փաստահավաք առաքելության միջոցով:

Տվյալ որոշումից հետո վերոնշյալ բոլոր մտադրությունները գործնականում կյանքի կոչվեցին:

## Հայաստանում ԵՄ առաքելություն

Հայաստանում ԵՄ առաքելությունը (EUMA) մեկնարկել է ԵՄ խորհրդի 2023 թ. փետրվարի 20-ի<sup>25</sup> որոշմամբ՝ ի պատասխան Հայաստանի իշխանությունների պաշտոնական դիմումի՝ տեղում ԵՄ քաղաքացիական առաքելություն տեղակայելու վերաբերյալ: Սա տեղի է ունեցել՝ հաշվի առնելով ավելի վաղ իրականացված ԵՄ դիտորդական կարողության (EUMCAP) դրական փորձը, որը 2022 թ. հոկտեմբերի 20-ից մինչև 2022 թ. դեկտեմբերի 19-ը տեղակայված էր Հայաստան-Ադրբեջան սահմանի հայկական հատվածում:

2025 թ. հունվարի 30-ին Եվրոպական խորհուրդը երկարաձգեց առաքելության առաջին երկամյա մանդատը ևս երկու տարով՝ 2025 թ. փետրվարի 20-ից մինչև 2027 թ. փետրվարի 19-ը: ՀԵՄԱ-ի երկրորդ մանդատը նախատեսում է մինչև 225 աշխատակիցների ներգրավում՝ ներառյալ 166 միջազգային և 50 տեղական աշխատակից: ՀԵՄԱ-ի դիտորդներն ու քաղաքացիական փորձագետները գործուղվում են ԵՄ անդամ 25 պետություններից, ինչպես նաև Կանադայից:

ՀԵՄԱ-ն տեղակայված է և գործում է Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքում՝ Ադրբեջանի հետ միջազգային սահմանի հայկական կողմում: Առաքելության գլխավոր գրասենյակը գտնվում է Եղեգնաձորում. վեց առաջապահ օպերացիոն բազաները համապատասխանաբար տեղեկայված են Եղեգնաձոր, Ջերմուկ, Մարտունի, Կապան, Գորիս և Իջևան քաղաքներում, իսկ կապի ապահովման գրասենյակը գտնվում է Երևանում<sup>26</sup>:

25 Տե՛ս ավելին՝ <https://eur-lex.europa.eu/eli/dec/2023/386/oj/eng>  
26 Տե՛ս [https://www.eeas.europa.eu/euma/about-european-union-mission-armenia\\_en?s=410283](https://www.eeas.europa.eu/euma/about-european-union-mission-armenia_en?s=410283)

ԵՄ քաղաքացիական առաքելության տեղակայումը Հայաստանի Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով բացառիկ կարևորություն ունի: Այն ոչ միայն նպաստեց առաքելության մանդատի գործողության ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ ադրբեջանական հարձակումների կանխարգելմանը, այլև արտաքին աշխարհին ուղերձ հղեց Եվրոպական միության կողմից Հայաստանին ցուցաբերվող ավելի մեծ աջակցության և, ըստ էության, Հայաստանում եվրոպական ներկայության ամրապնդման մասին: Թեև ՀԵՄԱ-ն իր բնույթով քաղաքացիական առաքելություն է, այն էականորեն սահմանափակեց Ադրբեջանի «սողացող» առաջխաղացման (creeping conquest) ձգտումները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաքելությունը կարող է ապահովել իրավիճակի օբյեկտիվ գնահատում և այն ներկայացնել արտաքին դերակատարներին: Այդ պայմաններում Ադրբեջանի համար զգալիորեն դժվարանում էր շրջանառել անհիմն կամ «գոյություն չունեցող» արդարացումներ՝ Հայաստանի նկատմամբ հերթական ագրեսիան հիմնավորելու համար: Սրանով է պայմանավորված նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի դժգոհությունը և ՀԵՄԱ-ի հասցեին հնչեցված հրապարակային քննադատությունը<sup>27</sup>: Հենց նույն այս տրամաբանությամբ է բացատրվում, թե ինչու Ադրբեջանը խաղաղության համաձայնագրի շրջանակում փորձում է որպես նախապայման ներառել սահմանների երկայնքով երրորդ կողմի ուժերի չտեղակայման դրույթը<sup>28</sup>: Մնում է տեսնել, թե այդ դրույթը գործնականում ինչպես կմեկնաբանվի և արդյոք հնարավոր կլինի գտնել իրավաքաղաքական մանևրի հնարավորություն, ինչը թույլ կտա ապահովել Հայաստանում ՀԵՄԱ-ի ներկայության շարունակականությունը:

### Եվրոպական խաղաղության գործիքակազմ

2024 թ. հուլիսի 22-ին Եվրոպական խորհուրդը Եվրոպական խաղաղության գործիքակազմի (EPF) շրջանակներում ընդունեց Հայաստանի Հանրապետության զինված ուժերին աջակցելու վերաբերյալ առաջին 10 մլն եվրո արժողությամբ աջակցության միջոցը: Աջակցության միջոցի հայտարարագրված նպատակը շարժական վրանային ճամբարի տեղակայումն էր՝ այն ընդլայնելու ու բրիգադային մակարդակի հասցնելու նկատառումով, որն ուղղված էր զինված ուժերի լոգիստիկ կարողությունների ամրապնդմանը, ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում քաղաքացիական բնակչության պաշտպանության բարելավմանը նպաստելուն, ինչպես նաև երկրի դիմակայունության և զինված ուժերի տարբեր ստորաբաժանումների միջև փոխգործունակության բարձրացմանը այն դեպքերում, երբ ապագայում դրանք կմասնակցեն միջազգային ռազմական առաքելություններին և գործողություններին:

2026 թ. հունվարի 29-ին Եվրոպական խորհուրդը, Եվրոպական խաղաղության գործիքակազմի շրջանակում, հաստատեց Հայաստանի համար 20 մլն եվրո արժողությամբ աջակցության երկրորդ միջոցը<sup>29</sup>: Այս անգամ աջակցությունը տրամադրվում է Հայաստանի զինված ուժերի լոգիստիկ կարողությունները զարգացնելու նպատակով՝ հատուկ կարևորելով ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում քաղաքացիական բնակչության պաշտպանության բաղադրիչը, ինչպես նաև զինված ուժերի փոխգործելիության աշխատանքների արագացման ուղղությունը: Այն գնահատվում է որպես ԵՄ-Հայաստան ավելի սերտ համագործակցության հերթական քայլ՝ միտված Հայաստանի դիմակայունության հետագա ամրապնդմանը, ինչը նպաստում է տարածաշրջանում կայունությանը, խաղաղությանը և անվտանգությանը<sup>30</sup>:

2024 թվականին ԵԽԳ-ի շրջանակներում երկու անգամ աջակցման միջոցների տրամադրումը, բացի պաշտոնապես ներկայացվող նպատակներից, դիտարկվում է նաև որպես ԵՄ-ի՝ Հայաստանին սատար կանգնելու լրացուցիչ ազդակ և արտաքին աշխարհին հասցեագրված ուղերձ՝ Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման քաղաքականությանը ցուցաբերվող ավելի ընդգծված աջակցության մասին, այդ թվում՝ պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

27 Իլհամ Ալիևը մեղադրում է EUMA-ին լրտեսության մեջ՝ <https://mediamax.am/en/news/foreignpolicy/57211>  
28 Նախաստորագրված խաղաղության համաձայնագրի VII հոդվածը՝ <https://www.mfa.am/en/press-releases/2025/08/11/Initialled%20Arm-Az%20Peace%20Agreement%20text/13394>  
29 Տե՛ս [https://www.eeas.europa.eu/delegations/armenia/european-peace-facility-council-adopts-second-bilateral-assistance-measure-support-armenia\\_en](https://www.eeas.europa.eu/delegations/armenia/european-peace-facility-council-adopts-second-bilateral-assistance-measure-support-armenia_en)  
30 ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալասի հայտարարությունը՝ նոր EPF աջակցության միջոցի վերաբերյալ՝ [https://www.eeas.europa.eu/delegations/armenia/european-peace-facility-council-adopts-second-bilateral-assistance-measure-support-armenia\\_en](https://www.eeas.europa.eu/delegations/armenia/european-peace-facility-council-adopts-second-bilateral-assistance-measure-support-armenia_en)

## ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենք

2022 թվականից սկսած Հայաստանի քաղաքացիական հասարակության շրջանում գործող ժողովրդավարական ուժերը և արևմտամետ քաղաքական կուսակցությունները<sup>31</sup> տարբեր ձևաչափերով առաջ են մղել ԵՄ հետ առավել սերտ ինտեգրման, այդ թվում՝ ԵՄ անդամակցության օրակարգը: Այդ ջանքերի կարևոր ձեռքբերումներից էր «Եվրոպական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքի նախագծի շրջանառության մեջ դնելու նպատակով հանրային օրենսդրական նախաձեռնության հաջող մեկնարկը (հանրային խոսույթում՝ «Եվրաքվե» նախաձեռնություն)<sup>32</sup>: 2024 թ. հուլիսի 23-ին նախաձեռնության մասնակիցները (51 անդամներ) պաշտոնապես հայտարարեցին օրենսդրական նախաձեռնություն սկսելու իրենց մտադրության մասին: Օրենքի նախագիծը կազմված էր նախաբանից, որտեղ նշվում էր, որ օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության նպատակը ժողովրդավարական ինստիտուտների զարգացումն է, հասարակության բարեկեցության բարձրացումը, անվտանգության և դիմակայունության ամրապնդումը, ինչպես նաև պետությունում իրավունքի գերակայության ուժեղացումը: Օրենքի հիմնական մասով հայտարարվում էր Եվրոպական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկը<sup>33</sup>:

Ստորագրահավաքի փաստացի գործընթացը մեկնարկել է 2024 թ. սեպտեմբերի 16-ին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն<sup>34</sup> Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնություն ներկայացնելու համար պետք է երկու ամսվա ընթացքում հավաքվեր 50,000 քաղաքացու ստորագրություն: Ստորագրահավաքի գործընթացի մեկնարկից մեկ ամսից մի փոքր ավել ժամանակահատվածում նախաձեռնությունը հաջողությամբ հավաքեց շուրջ 60,000 ստորագրություն<sup>35</sup>, որոնք այնուհետև ներկայացվեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ իսկությունը ստուգելու նպատակով: Իսկության ստուգման գործընթացը հաջողությամբ անցնելուց հետո՝ 2025 թվականի սկզբին, Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հավանություն տվեց օրենսդրական նախաձեռնությանը, որը հետագայում՝ 2025 թ. մարտի 26-ին<sup>36</sup> ընդունվեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից ստորագրվելուց հետո՝ 2025 թ. ապրիլի 4-ին:

«Եվրաքվե» նախաձեռնության դերը իսկապես դժվար է գերազնահատել: Նախևառաջ, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների ընդունումից ի վեր այն դարձավ առաջին հաջողված ժողովրդական նախաձեռնությունը (հենց 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով ՀՀ քաղաքացիներին վերապահվեց նման իրավասություն): Երկրորդ՝ նախաձեռնությունը կարևոր քայլ էր միտված Հայաստանի քաղաքացիների շրջանում Եվրոպական միության, որպես նշանակալի գլոբալ դերակատարի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: «Եվրաքվեի» քարոզարշավի ընթացքում նախաձեռնության անդամներն այցելեցին Հայաստանի տարբեր մարզեր և լայն հանրության հետ քննարկեցին ԵՄ-Հայաստան գործընկերության թեման, ԵՄ-ի գլոբալ և Հայաստանի համար ունեցած դրական ձեռքբերումները, «Եվրոպայի գաղափարը», ինչպես նաև այն քաղաքական և տնտեսական առավելությունները, որոնք կարող են ապահովել ԵՄ-ը Հայաստանի անդամակցությունը և այլն: Սա ակնհայտորեն դրական ազդեցություն է ունեցել հանրային ընկալումների ձևավորման վրա, ինչը արտացոլվել է նաև 2024 թվականի աշնանը Միջազգային հանրապետական ինստիտուտի իրականացված հարցումների արդյունքներում, որոնց համաձայն՝ հարցվածների 59%-ը նշել է, որ համապատասխան հարցադրման դեպքում կողմ կքվեարկեր ԵՄ անդամակցությանը: Միևնույն ժամանակ, նախաձեռնությունը ցույց տվեց նաև ԵՄ

31 Երկու եվրոպական հարթակների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները՝ ԵՄ-Հայաստան Քաղաքացիական հասարակության հարթակը և ԱԳՔ ՔՀՖ-ի Հայկական հարթակը, միավորվեցին «Հանրապետություն» կուսակցության, «Հանուն Հանրապետության» կուսակցության և Հայաստանի Եվրոպական կուսակցության՝ արևմտամետ ուժերի հետ՝ նախաձեռնելու 50,000 ստորագրության հավաքագրում՝ օրենքի նախագիծը Ազգային ժողով ներկայացնելու համար:  
32 Տե՛ս նախաձեռնության մեկնարկի ուղիղ հետարձակումը՝ [https://www.youtube.com/watch?v=9yDZQMS\\_RSg](https://www.youtube.com/watch?v=9yDZQMS_RSg) (31:10-ից մինչև 33:26)  
33 Տե՛ս օրենքը՝ <https://www.arlis.am/hy/acts/205203>  
34 ՀՀ Սահմանադրություն, հոդված 109, մաս 6՝ <https://www.arlis.am/hy/acts/102510>  
35 Տե՛ս <https://www.youtube.com/watch?v=JVxjQ7YBXbU>  
36 Տե՛ս <https://hy.armradio.am/archives/641885>

ներսում գործող դերակատարներին, որ Հայաստանը իրապես ձգտում է խորացնել գործընկերությունը Եվրոպական միության հետ՝ ներառյալ ԵՄ անդամակցության պատրաստակամության միջոցով: Վերջապես, նախաձեռնությունը հնարավորություն տվեց իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը հստակորեն համախմբել իշխանական թիմի ներսում առկա պրոեվրոպական գործիչներին՝ արձագանքելով քաղաքացիների կոչերին և ցույց տալով ուղիղ ժողովրդավարության գործնական դրսևորում:

## Վիզաների ազատականացման երկխոսություն նախապատմություն

ՀՀԳՀ-ի 15-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում էր, որ «պատեհ ժամանակ կդիտարկեն մուտքի արտոնագրի ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու հարցը՝ պայմանով, որ արդյունավետ կառավարվող և անվտանգ շարժունակության վերաբերյալ պայմանները գործեն»<sup>37</sup>: Այդուհանդերձ, վիզաների ազատականացման շուրջ երկխոսությունը փաստացի մեկնարկեց միայն 2024 թվականի վերջում: Հաշվի առնելով, որ ՀՀԳՀ-ն ժամանակավոր կիրառությամբ ուժի մեջ է մտել 2018 թվականի սկզբին, ստացվում է, որ Հայաստանից պահանջվել է ավելի քան 6 տարի՝ վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկին հասնելու համար:

Հայաստանի և Եվրոպական միության միջև դեռ 2012 թվականից գործում է Վիզաների դյուրացման համաձայնագիրը, որով սահմանվել են է մի շարք դրական փոփոխություններ Հայաստանի քաղաքացիներին կարճաժամկետ Շենգենյան վիզաների տրամադրման գործընթացում, այդ թվում՝ պահանջվող փաստաթղթերի միասնականացված և պարզեցված ցանկ, վիզային վճարների նվազեցում, որոշակի կատեգորիայի ՀՀ քաղաքացիների համար բազմակի մուտքի երկարաժամկետ վիզաների տրամադրում, ինչպես նաև դիմումների մշակման ավելի կարճ ժամկետներ<sup>38</sup>: Այնուամենայնիվ, գործնականում բազմաթիվ դեպքերում վիզաների ստացման գործընթացում Հայաստանի քաղաքացիները բախվում են դժվարությունների՝ պայմանավորված հյուպատոսական ծառայություններում դիմումների զգալի կուտակումների և երկար սպասման հերթերի հետ, ինչի հետևանքով նրանք հաճախ ստիպված են լինում դիմել մասնավոր, երրորդ կողմ հանդիսացող կազմակերպությունների՝ մուտքի արտոնագրի դիմումի ներկայացման պայմանավորվածություն (appointment) ստանալու համար: Այս հանգամանքը փաստացիորեն նվազեցնում է դյուրացման համաձայնագրով նախատեսված որոշ արտոնությունների իրագործելիությունը՝ դրանք դարձնելով առավելապես ձևական: Արդյունքում, վիզային ռեժիմի ազատականացումը շարունակում է մնալ ինչպես Հայաստանի պետական մարմինների, այնպես էլ հանրության երկարաժամկետ ակնկալիքներից մեկը, և վերջին 7 տարիների ընթացքում այդ ակնկալիքը բազմիցս բարձրաձայնվել է ԵՄ ինստիտուտների առջև:

Արտաքին հարաբերությունների հարցերով խորհրդի՝ 2024 թվականի հուլիսի 22-ի հանդիպման ընթացքում ԵՄ Արտաքին գործերի նախարարները ողջունել են «Հայաստանի հետ վիզաների ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու Հանձնաժողովի մտադրությունը»: Վիզաների ազատականացման երկխոսությունը (ՎԱԵ) մեկնարկել է 2024 թ. սեպտեմբերի 9-ին՝ նպատակ հետապնդելով աջակցել Հայաստանին՝ ԵՄ-ի հետ կարճաժամկետ այցելությունների համար (90 օրից պակաս՝ ցանկացած 180-օրյա ժամանակահատվածում) առանց վիզայի ռեժիմի հասնելու հարցում: Վիզաների ազատականացման երկխոսությունը կառուցվել է ԵՄ-Հայաստան վիզաների դյուրացման և վերադարձի (readmission) համաձայնագրերի հաղորդված հաջող իրականացման

37 St'u [https://www.mfa.am/filemanager/eu/CEPA\\_ENG\\_1.pdf](https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ENG_1.pdf)  
38 St'u' [https://www.mfa.am/filemanager/Statics/EU\\_AM\\_VFA\\_am.pdf](https://www.mfa.am/filemanager/Statics/EU_AM_VFA_am.pdf)

հիման վրա: Նշենք, որ 2014 թվականի հունվարի 1-ից ԵՄ քաղաքացիներն ազատված են Հայաստան ճանապարհորդելու համար վիզա ստանալու պահանջից:

Կողմերի միջև առկա է համաձայնություն, որ նրանք սերտորեն կհամագործակցեն՝ վիզաների ազատականացման երկխոսությունն արդյունավետ կերպով առաջ մղելու գործում: Այս գործընթացը լինելու է արժանիքահեն (merit-based) և կշարունակվի այնքան ժամանակ, որքան կպահանջվի ապահովելու բոլոր համապատասխան չափանիշների և կատարողական ուղենիշների (benchmarks) բավարարումը, ինչից հետո վիզաների ազատականացման վերաբերյալ վերջնական որոշումը կընդունվի Եվրոպական խորհրդի և Եվրոպական խորհրդարանի կողմից: Գործընթացին աջակցություն կտրամադրվի նաև Հայաստանի համար նախատեսված 2024–2027 թթ. «Դիմակայունության և աճի ծրագրի» շրջանակներում:

Եվրոպական հանձնաժողովը Վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը (VLAP) հայկական կողմին փոխանցել է 2025 թ. նոյեմբերի 5-ին<sup>39</sup>, ինչը, ինքնին, աննախադեպ արագ գործընթաց էր, որը հաջորդեց Հայաստանի կողմից ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկի վերաբերյալ հատուկ օրենքի ընդունմանը: Իր հերթին, ԵՄ կողմը բարձր է գնահատել այն հանգամանքը, որ Հայաստանը վիզաների ազատականացման շուրջ երկխոսություն հարցում առաջ է շարժվել ավելի արագ, քան որևէ այլ երկիր<sup>40</sup>: Հարկ է նշել, որ այս գործողությունների ծրագիրը մշակված է հատուկ Հայաստանի համար (tailor-made) և նույնականացնում է բոլոր այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն, ինչպես նաև այն բոլոր պահանջները, որոնք Հայաստանը պետք է բավարարի: Գործողությունների ծրագրում նախատեսված միջոցառումները կառուցված են չորս հիմնական «բլոկների» շուրջ, որոնք ներառում են՝

1. փաստաթղթերի պաշտպանություն, ներառյալ կենսաչափական տվյալներ,
2. սահմանների համալիր կառավարում, միգրացիոն կառավարում և ապաստանի տրամադրում,
3. հասարակական կարգ և անվտանգություն,
4. արտաքին հարաբերություններ և հիմնարար իրավունքներ:

Ընթացիկ իրավիճակի էական փոփոխության դեպքում Եվրոպական հանձնաժողովը, խորհրդակցելով Խորհրդի հետ, կարող է առաջարկել վերանայել Գործողությունների ծրագիրը և կրկին համապատասխանեցնել այն:

Վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը նախատեսում է երկաստիճան չափանիշներ (benchmarks), որոնք պետք է գնահատվեն՝ հաջորդելով միմյանց աստիճանական կիրառմամբ.

1. նախնական չափանիշներ, որոնք վերաբերում են քաղաքականության շրջանակին (օրենսդրություն և պլանավորում), և
2. Ավելի որոշակիացված ուղենիշներ, որոնք վերաբերում են համապատասխան միջոցառումների արդյունավետ և կայուն իրականացմանը:

Հանձնաժողովի հաշվետվությունների միջոցով Եվրոպական խորհրդարանը և Խորհուրդը կանոնավոր կերպով կտեղեկացվեն ուղենիշների յուրաքանչյուր խմբի կատարման մասին, որոնք կգնահատվեն տեղում իրականացվող գնահատումներով՝ ԵՄ անդամ պետությունների փորձագետների ներգրավմամբ: Այդ նպատակով Հանձնաժողովն ակնկալում է, որ Հայաստանը կտրամադրի մանրամասն տեղեկություններ (ներառյալ համապատասխան վիճակագրական տվյալներ և

39 St'u [https://home-affairs.ec.europa.eu/news/commission-presents-action-plan-visa-liberalisation-armenia-2025-11-05\\_en](https://home-affairs.ec.europa.eu/news/commission-presents-action-plan-visa-liberalisation-armenia-2025-11-05_en)  
40 Եվրոպական հանձնաժողովի Միգրացիայի և ներքին գործերի գլխավոր տնօրինության գլխավոր տնօրենի տեղակալ Յոհաննես Լուխսեր <https://www.1lurer.am/en/2025/11/05/Armenia-has-passed-this-path-the-fastest-EU-official-on-visa-liberalization-process/1410483>

Ֆինանսական ծրագրեր՝ կայուն կերպով Գործողությունների ծրագրի իրականացմանն աջակցելու համար), ինչը թույլ կտա գնահատել տեղում ձեռք բերված կոնկրետ արդյունքները:

Բացի այդ, ԵՄ-ի և Հայաստանի միջև հետընդունման մասին համատեղ համաձայնագրի լիարժեք և արդյունավետ իրականացման մշտադիտարկումը կշարունակի իրականացնել համապատասխան Համատեղ կոմիտեն: Ինչ վերաբերում է ԵՄ-ի և Հայաստանի միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի իրականացմանը (որի մշտադիտարկումն իրականացնում է համապատասխան Համատեղ կոմիտեն), առանձնակի կարևորություն կտրվի հիմնավորող փաստաթղթերի հետ կապված խարդախության ռիսկերի հաղթահարմանը: Հանձնաժողովը նաև շարունակաբար մշտադիտարկում կիրականացնի, ի թիվս այլնի, Հայաստանում վիզաների մերժման մակարդակի, ԵՄ արտաքին սահմանին մուտք գործելու մերժում ստացած կամ ԵՄ-ում անօրինական բնակվող՝ բերման ենթարկված ՀՀ քաղաքացիների թվի, վերադարձի մասին որոշումների թվի և Հայաստան վերադարձողների թվի, ՀՀ քաղաքացիների կողմից ներկայացված ԵՄ-ում ապաստան տրամադրելու մասին դիմումների թվի, ինչպես նաև կատարման այլ համապատասխան ցուցանիշների առնչությամբ: Հանձնաժողովը նաև կիրականացնի Հայաստանի համար վիզաների հետագա ազատականացման արդյունքում ԵՄ-ի վրա միգրացիայի և անվտանգության հնարավոր ազդեցության գնահատում, ինչպես նաև հաշվի առնելով ԵՄ համապատասխան դերակատարների կարծիքը՝ նախքան ուղենիշների երկրորդ փուլի գնահատմանն անցնելը: Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում անհրաժեշտ կլինի անդրադառնալ բացահայտված հնարավոր ազդեցություններին և միջոցներին:

Վիզաների հետագա ազատականացման հնարավոր ազդեցության նախնական գնահատման առումով, պետք է նշել, որ վիզաների մերժման մակարդակը գրեթե անփոփոխ է մնացել 2019-2023 թվականներին (13.16% 2019 թվականին, 13.2% 2023 թվականին), մինչդեռ միևնույն ժամանակ, այս ժամանակահատվածում տրամադրված վիզաների ընդ հանուր թիվն աճել է 36%-ով: 2024 թվականի վերջին տվյալները ցույց են տալիս, որ մերժումների մակարդակը մնացել է կայուն (12.4%), մինչդեռ վիզայի դիմումների թիվն աճել է՝ 2023 թվականի 80.356-ից 2024 թվականին հասնելով 100.352-ի: Պետք է նշել նաև Հայաստանի՝ հաճախ ճամփորդող բարեխիղճ քաղաքացիներին բազմակի մուտքի վիզաների տրամադրման աճող թիվը:

### Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի բաղադրիչները<sup>41</sup>

Վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը (VLAP) թեև հարմարեցված է ԵՄ-Հայաստան շարունակական համագործակցության առանձնահատկություններին, ընդհանուր առմամբ համադրելի է այն շրջանակային մոտեցումների հետ, որոնք նախկինում կիրառվել են Արևելյան գործընկերության ծրագրի այլ երկրների՝ Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի նկատմամբ, որոնք ձգտել և ձեռք են բերել Եվրոպական միության հետ առանց վիզայի ռեժիմ: Գործողությունների ծրագիրը սահմանում է համապարփակ բարեփոխումների օրակարգ մի շարք իրար հետ փոխկապակցված քաղաքական ոլորտներում, ինչպիսիք են փաստաթղթերի անվտանգության ապահովումը (մասնավորապես՝ կենսաչափական անձնագրերի ներդրումը), ինտեգրված սահմանային կառավարումը, միգրացիայի և շարժունակության կառավարումը, անձնական տվյալների պաշտպանությունը, իրավունքի գերակայության և հակակոռուպցիոն երաշխիքների ապահովումը, անձանց անվտանգ տեղաշարժի ապահովումը, ինչպես նաև հիմնարար իրավունքների պաշտպանությունը:

Թեև այլ երկրների փորձի համեմատական ուսումնասիրությունը կարող է տրամադրել գործընթացի վերաբերյալ որոշակի կողմնորոշիչ ժամանակային շրջանակներ, հարկավոր է նշել, որ վիզաների ազատականացման յուրաքանչյուր գործընթաց, այնուամենայնիվ, շարունակում է մնալ կոնտեքստային և տվյալ երկրի պայմաններին բնորոշ: Իրականացման տեմպն ու հաջողությունն առաջին հերթին

41 Տե՛ս [https://home-affairs.ec.europa.eu/action-plan-visa-liberalisation-armenia\\_en](https://home-affairs.ec.europa.eu/action-plan-visa-liberalisation-armenia_en)

կախված են ազգային ինստիտուտների կարողություններից և արդյունավետությունից, պահանջվող բարեփոխումների ծավալից ու խորությունից, ինչպես նաև քաղաքական հանձնառության և հասարակական ներգրավվածության (ownership) մակարդակից: Այս առումով տեխնիկական գործընթացը համակարգվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից, սակայն ԵՄ անդամ պետությունները կունենան որոշիչ դեր՝ Հայաստանի կողմից արձանագրած առաջընթացի գնահատման և գործընթացի վերջնական արդյունքների սահմանման գործընթացում: Հետևաբար, բարեփոխումները պետք է ոչ միայն ձևականորեն ընդունվեն օրենսդրության տեսքով, այլ նաև գործնականում արդյունավետորեն և կայուն կերպով իրականացվեն:

Այսպիսով, առանց վիզայի ճանապարհորդական ռեժիմին հասնելու ընդհանուր ժամանակային շրջանակը պայմանավորված կլինի այն արագությամբ, որակով և հետևողականությամբ, որով Հայաստանի կառավարությունը կիրականացնի Գործողությունների ծրագիրը: Առանձնահատուկ կարևորություն ունի բարեփոխումների գործընթացի ազգային սեփականության զգացողությունը (national ownership), որը ուղիղ կերպով կազդի արձանագրված արդյունքների թե՛ վստահելիության մակարդակի, թե՛ կայունության վրա: Կարևոր է նշել, որ ԵՄ-Հայաստան երկխոսության ներկայիս որակը գտնվում է շատ բարձր մակարդակի վրա՝ հաշվի առնելով պահանջվող բարեփոխումների առաջընթացի գործում հայաստանյան ինստիտուտների կողմից ցուցաբերվող ընդգծված հետաքրքրվածությունը, հանձնառությունը և տեխնիկական կարողությունները:

Ակնկալվում է, որ ԵՄ անդամ պետությունները մանրակրկիտ կերպով կգնահատեն իրականացված բարեփոխումների բովանդակությունը և կիրառելիության արդյունավետությունը: Այնուամենայնիվ, երբ բարեփոխումները արժանահավատորեն ավարտված լինեն, ԵՄ կողմում առկա կլինի ուժեղ քաղաքական խթան և հանձնառություն՝ առանց վիզայի ռեժիմին անցումն ապահովելու ուղղությամբ: Ակնկալվում է, որ այս գործընթացը էական դեր կկատարի մարդկանց միջև շփումների (people-to-people contacts) ընդլայնման և Հայաստանի ու ԵՄ անդամ պետությունների քաղաքացիների միջև կապերի խորացման գործում:

Կարևոր է, որ վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը ընկալվի ոչ միայն որպես առանց վիզայի ռեժիմին հասնելու տեխնիկական ուղեցույց, այլ որպես ավելի ընդգրկուն գործիք բարեփոխումների իրականացման համար: Ծրագրով նախատեսված միջոցառումները կնպաստեն Հայաստանում իրավունքի գերակայության ամրապնդմանը, կենսաչափական համակարգերի կիրառմամբ ճանապարհորդական փաստաթղթերի անվտանգության և դրանց ամբողջականության բարձրացմանը, սահմանային և միգրացիոն կառավարման կատարելագործմանը, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության մեխանիզմների ամրապնդմանը՝ որպես հիմնարար սկզբունք, որը կիսում են թե՛ Եվրոպական միությունը, թե՛ Եվրոպայի խորհուրդը, որի անդամ է նաև Հայաստանը: Ընդհանուր առմամբ այս բարեփոխումները նպատակ ունեն ապահովելու ավելի անվտանգ և ապահով շարժունակություն՝ միաժամանակ աջակցելով Հայաստանի ինստիտուցիոնալ զարգացմանն ու եվրոպական չափանիշներին համապատասխանեցմանը:

Հայկական կողմում գործընթացը համակարգվում է ներքին գործերի նախարար Արփիմե Սարգսյանի կողմից, որն ընդհանուր գնահատմամբ համարվում է այն բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, ով լավ տիրապետում է ԵՄ համապատասխան չափանիշներին, որոնք անհրաժեշտ են առանց վիզայի ռեժիմին Հայաստանի հաջող անցման համար: 2026 թվականի համար նախատեսված առանցքային գործողությունները ներառում են նոր կենսաչափական անձնագրերի ներդրման մեկնարկը, օրենսդրական կարգավորումների ամրապնդումը և արձանագրված առաջընթացի վերաբերյալ ԵՄ փորձագիտական գնահատումները: Նոր կենսաչափական անձնագրերի արտադրությանն առնչվող հանձնառությունների իրականացման համար արդեն ընտրվել է ֆրանսիական առաջատար կոնսորցիում: Նախատեսվում է նաև մեկնարկել 2025 թ. հուլիսին ընդունված «Բնակչության պետական ռեգիստրի մասին» նոր օրենքի կիրառումը և 2026 թվականին ուժեղացնել սահմանային կառավարման համակարգը:

# ԵՄ-Հայաստան գործընկերության ռազմավարական օրակարգ նախապատմություն

2023 թ. հոկտեմբերի 26–27-ին՝ Լաչինի միջանցքի շուրջ մեկ տարի տևած շրջափակումից և Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ իրականացված լայնածավալ ռազմական հարձակումից անմիջապես հետո, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի կերպով տեղահանվեցին ավելի քան 115.000 հայեր, Եվրոպական խորհուրդը ԵՄ բարձր ներկայացուցչին և Հանձնաժողովին հրավիրել էր ներկայացնելու տարբերակներ՝ առավել արդյունավետ ամրապնդելու Հայաստան-ԵՄ հարաբերությունները բոլոր ուղղություններով:

Հարկավոր է նշել, որ 2023 թ. հոկտեմբերին ԵՄ-ի կողմից Հայաստանին աջակցելու հռչակված խոստումը գործնականում կյանքի կոչելու ուղղությամբ իրականացվել են զգալի միջոցառումներ: Այդ ճանապարհին կարևոր քայլերից մեկը 2024 թ. ապրիլի 5-ին Բրյուսելում գումարված բարձր մակարդակի Հայաստան–ԵՄ–ԱՄՆ համատեղ հանդիպումն էր, որի ընթացքում Եվրոպական միությունը հանձն առավ աջակցել Հայաստանին «Հայաստանի դիմակայունության և աճի ծրագրի» շրջանակներում՝ հաջորդ 4 տարիների ընթացքում տրամադրելով 270 մլն եվրոյի դրամաշնորհներ և դրանով արձագանքելով էներգետիկայի, տրանսպորտի, կապակցվածության, բիզնեսների, ավիացիայի և միջուկային անվտանգության, առևտրի դիվերսիֆիկացման և այլ ուղղություններով Հայաստանի կարիքներին: ԵՄ ղեկավարները նաև հայտարարեցին «Եվրոպական միության և Հայաստանի միջև նոր և հավակնոտ Գործընկերության օրակարգի» մշակման գործընթացի մեկնարկի մասին<sup>42</sup>:

Իր հերթին Հայաստանի վարչապետը նշել է, որ, չնայած շարունակվող ճգնաժամային զարգացումներին, Հայաստանը Էական առաջընթաց է արձանագրել ժողովրդավարության ապահովման ուղղությամբ և հետագայում ևս շարունակելու է այդ ջանքերը՝ Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների դիմակայունության ամրապնդման համար: Հարկ է նշել, որ Հայաստանի կառավարության այս մոտեցումը հիմնված էր մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի վրա, որն ընկած է նաև Հայաստան–ԵՄ համագործակցության հիմքում: Միաժամանակ, դա կարևոր ընդգծում էր, քանի որ այն վերահաստատեց Հայաստանի հանձնառությունը արդարադատության և հանրային հատվածի բարեփոխումների առաջնության հարցում՝ ավելի ուժեղ, առավել անվտանգ և զարգացած պետություն կառուցելու նպատակով: Եռակողմ հարթակը ծառայեց նաև որպես ռազմավարական ձևաչափ Հայաստանի կառավարության համար կրկին ներկայացնելու իր «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը, որի նպատակն է խթանել Հարավային Կովկասի պետությունների և տարածաշրջանի սահմաններից դուրս գտնվող հարևան երկրների միջև կապակցվածությունն ու երկխոսությունը: Ավելին, վարչապետ Նիկոլ Փաշինյանը պատրաստակամություն է հայտնել այդ նախաձեռնությունը համադրելու ԵՄ «Գլոբալ դարպասներ» նախաձեռնության (Global Gateway) ռազմավարության հետ, ինչը կարևոր և առաջադեմ քայլ էր՝ միտված Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացում ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

Այսպիսով, եռակողմ հանդիպման ձևաչափը Հայաստանի համար դարձավ կարևոր հանգրվան թե՛ արտաքին ցնցումների նկատմամբ երկրի դիմակայունությունը բարձրացնելու նպատակով ԵՄ–ԱՄՆ ներդրումային և քաղաքական ներգրավվածության ամրապնդման, թե՛ առանցքային աշխարհաքաղաքական ուղերձի փոխանցման տեսանկյունից. Հայաստանը ձգտում է խաղաղության տարածաշրջանում և պատրաստ է համագործակցել այն ուժային կենտրոնների հետ, որոնք շահագրգռված են խաղաղության օրակարգի առաջնումբը:

42 Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի մամուլի հաղորդագրությունը Հայաստանի համար «Դիմակայունության և աճի ծրագրի» վերաբերյալ՝ [https://enlargement.ec.europa.eu/news/press-statement-president-von-der-leyen-resilience-and-growth-plan-armenia-2024-04-05\\_en](https://enlargement.ec.europa.eu/news/press-statement-president-von-der-leyen-resilience-and-growth-plan-armenia-2024-04-05_en)

# ԵՄ-Հայաստան գործընկերության ռազմավարական օրակարգի ընդունումը

ԵՄ-Հայաստան գործընկերության նոր ռազմավարական օրակարգը հաստատվել է 2025 թ. դեկտեմբերի 2-ին՝ ԵՄ–Հայաստան գործընկերության խորհրդի 6-րդ նիստում, որը նախագահում էր Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը<sup>43</sup>: Այն նշանակալի առաջ քայլ է արձանագրել կողմերի միջև քաղաքական, տնտեսական և ոլորտային համագործակցության խորացման ուղղությամբ՝ փոխարինելով 2017 թվականին հաստատված Գործընկերության առաջնահերթություններին:

Ռազմավարական օրակարգը նախապատրաստվել է որպես յուրահատուկ արձագանք Հայաստանի «ընդհանուր եվրոպական արժեքների հանդեպ շարունակական հանձնառությանը և Միության հետ ինտեգրումը խորացնելու հավակնությանը», ինչպես նաև ի պատասխան հայ ժողովրդի՝ եվրոպական ինտեգրումն առավել ուժեղացնելու ձգտումներին: ԵՄ-ը միաժամանակ համապատասխան կերպով արձանագրել է հայ ժողովրդի եվրոպական մղումները, որոնք մասնավորապես արտահայտվել են 2025 թ. մարտի 26-ին «Եվրոպական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» հանրային օրենսդրական նախաձեռնության ընդունմամբ, որին աջակցել է թե՛ Հայաստանի կառավարությունը, թե՛ Ազգային ժողովը: Օրակարգն արձագանքում է նաև Հայաստանի կողմից իր արտաքին քաղաքականությունը դիվերսիֆիկացնելու ջանքերին, ինչի մեկնարկը տրվել է Ռուսաստանի նկատմամբ ի հայտ եկած հիասթափության ֆոնին: Վերջապես, այն Հայաստան–ԵՄ համատեղ նախաձեռնություն է՝ հակազդելու հիբրիդային պատերազմին և հիբրիդային միջամտություններին, այդ թվում՝ Ադրբեջանի և Ռուսաստանի կողմից, որոնց թիրախում Հայաստանը գտնվում է 2018 թ. Թավշյա հեղափոխությունից ի վեր և որոնք առավել սրվեցին 2020 թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմի ընթացքում հայկական կողմի պարտությունից հետո:

Չնայած Հայաստանի հետ առաջին հայացքից բարեկամական հարաբերությունների պահպանմանը՝ Ռուսաստանի ղեկավարությունը՝ Կրեմլի հետ փոխկապակցված «փորձագետների» և նախկին բարձրաստիճան պաշտոնյաների միջոցով, բազմիցս հայկական իշխանություններին ուղղել է ռազմական ներխուժման սպառնալիքներ՝ նպատակ ունենալով վերականգնել իր նվազող ազդեցությունը Հայաստանում և տարածաշրջանում: Ակնհայտ է նաև, որ Կրեմլը դժվարությամբ է ընդունել այն իրողությունը, որ 2021 թ. հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրություններում հայ հասարակությունը երկրորդ նախագահ Քոչարյանի փոխարեն աջակցություն է ցուցաբերել գործող վարչապետի քաղաքական թիմին:

ՀԸԳՀ-ն (CEPA) ընդունելով որպես հարաբերությունների իրավական հիմք՝ նոր փաստաթուղթը ընդգրկում է ոլորտների լայն շրջանակ, որոնց ուղղությամբ ԵՄ–Հայաստան երկկողմ ջանքերը նախատեսվում է կենտրոնացնել, մասնավորապես ժողովրդավարության և իրավունքի գերակայության, արդարադատության բարեփոխումների, մարդու իրավունքների, սոցիալ-տնտեսական զարգացման, կապակցվածության, էներգետիկ անվտանգության, թվային և «կանաչ» անցման, տնտեսական դիվերսիֆիկացման, ինչպես նաև անվտանգության և պաշտպանության ոլորտում ընդլայնված համագործակցության ուղղություններով<sup>44</sup>:

Փաստաթուղթը նախատեսում է առավել մեծ ուշադրություն դարձնել փոխգործակցությանը տրանսպորտի, էներգետիկայի և թվային կապակցվածության ոլորտներում, ինչպես նաև ավելացնել ներդրումները «Գլոբալ դարպասներ» նախաձեռնության շրջանակներում: Սա համապատասխանում է Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ բարձր ներկայացուցչի՝ «Սևծովյան տարածաշրջանի վերաբերյալ» ԵՄ-ի ռազմավարական մոտեցման մասին Եվրոպական խորհրդարանին և խորհրդին ուղղված՝ 2025 թվականի մայիսի 28-ի համատեղ հաղորդագրությանը: Այն միաժամանակ աջակցում է Հայաստանի

43 ԵՄ–Հայաստան Գործընկերության խորհրդի 6-րդ նիստից հետո համատեղ մամուլի հայտարարություն՝ <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2025/12/03/joint-press-statement-following-the-6th-meeting-of-the-eu-armenia-partnership-council/>

44 Սանրամասների համար տե՛ս [https://enlargement.ec.europa.eu/joint-communication-european-parliament-and-council-european-unions-strategic-approach-black-sea\\_en](https://enlargement.ec.europa.eu/joint-communication-european-parliament-and-council-european-unions-strategic-approach-black-sea_en)

կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանը և տարածաշրջանային կապակցվածության օրակարգին: Փաստահավաք առաքելությունը հաստատել է, որ սա կբարելավի տարածաշրջանային փոխադարձ կապերը, տնտեսական դիմադրողականությունը և առևտրի ու շարժունակության հնարավորությունները: Նոր ռազմավարական օրակարգի շրջանակներում հատուկ ուշադրություն կդարձվի նաև Ադրբեյջանի կողմից 2023 թվականի սեպտեմբերին իրականացված ռազմական գործողությունից հետո տեղահանված Ղարաբաղի հայերի (այսուհետ՝ տեղահանված հայեր և (կամ) փախստականներ) կարիքների բավարարմանը և սոցիալ-տնտեսական ներառմանը նպաստելուն:

Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգը փոխարինում է առկա Գործընկերության առաջնահերթությունները: Այստեղ տարբերակվում են **կարճաժամկետ առաջնահերթություններ** (որոնք ենթակա են իրականացման, կամ որոնց առումով պետք է զգալի առաջընթաց գրանցել 3-4 տարվա ընթացքում) և **միջնաժամկետ առաջնահերթություններ** (որոնք ենթակա են իրականացման, կամ որոնց առումով պետք է զգալի առաջընթաց գրանցել 7 տարվա ընթացքում):

2025 թ. դեկտեմբերի 2-ին Գործընկերության խորհրդի 6-րդ նիստում հաստատվելուց հետո ներկայումս այն լիարժեքորեն գործող փաստաթուղթ է: Ակնհայտ է, որ Գործընկերության ռազմավարական օրակարգը լրացնում է ՀԸԳՀ-ն և չի կարող հակասել վերջինիս՝ հաշվի առնելով, որ ՀԸԳՀ-ն ունի ավելի բարձր իրավական ուժ՝ պայմանավորված ԵՄ անդամ պետությունների և Հայաստանի կողմից իրականացված վավերացման գործընթացի արդյունքում ընդունված միջազգային համաձայնագիր լինելու հանգամանքով: Օրակարգի իրականացումն ու մոնիթորինգը պետք է ապահովվի նույն մարմինների կողմից, որոնք ստեղծվել են ՀԸԳՀ-ի կիրարկումն ու վերահսկողությունն իրականացնելու համար: Այս մոտեցումը հաստատվում է նաև այն փաստով, որ ռազմավարական օրակարգը կարող է փոփոխվել Գործընկերության խորհրդի կողմից, որն էլ ՀԸԳՀ-ով ստեղծված մարմիններից մեկն է: Փաստաթղթում ընդգծվում է նաև քաղաքացիական հասարակության կողմից՝ ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակի ներգրավվածությունը մոնիթորինգի գործընթացում:

### Ռազմավարական օրակարգի ուղենիշային սկզբունքները

Իր նշանակությամբ և բնույթով Ռազմավարական օրակարգն առանցքային փաստաթուղթ է, որը առաջիկա տարիներին էականորեն ձևավորելու է Հայաստանի և ԵՄ-ի միջև գործընկերության օրակարգը: Ստորև ներկայացվում են ԵՄ-Հայաստան գործընկերության ռազմավարական օրակարգի իրականացման **ուղենիշային սկզբունքները**.

1. Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի շրջանակներում ձեռնարկվող գործողությունները պետք է լիովին համապատասխանեն ՀԸԳՀ-ին, այդ թվում՝ դրա նախաբանին:
2. Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգը պետք է իրականացվի թափանցիկ, հաշվետու և ներառական ձևով:
3. Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի համար պահանջվում է երկու կողմերի ներգրավվածություն և ՀԸԳՀ-ի հետ կապված բարեփոխումների վերաբերյալ երկխոսություն:

4. Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի նպատակը գործնական միջոցառումների աստիճանական իրականացմամբ շոշափելի և նախասահմանված արդյունքների հասնելն է:
5. Կողմերն ընդունում են քաղաքական հանձնառությամբ և պատշաճ տեխնիկական ու ֆինանսական միջոցներով համաձայնեցված առաջնահերթությունների իրականացմանն աջակցելու կարևորությունը:
6. Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի իրականացման հետ կապված մշտադիտարկում կանցկացվի, դրա վերաբերյալ տարեկան հաշվետվություններ կներկայացվեն, և կիրականացվի վերջինի գնահատում: Կուսումնասիրվի դրա առաջընթացը, այդ թվում՝ ՀԸԳՀ-ում նշված ինստիտուցիոնալ կառույցների համատեքստում: Կիրառական նաև քաղաքացիական հասարակության կողմից մշտադիտարկման գործունեության իրականացումը Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի նկատմամբ, այդ թվում՝ Հայաստան-ԵՄ քաղաքացիական հասարակության հարթակի շրջանակներում:

Ընդհանուր ընկալումն այն է, որ ԵՄ-ն Հայաստանին կօգնի Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգում սահմանված նպատակներն իրագործելու և առաջնահերթություններն իրականացնելու հարցում: ԵՄ-ն այդ ամենը կապահովի՝ կիրառելով աջակցության հասանելի բոլոր աղբյուրները, ինչպես նաև փորձը և խորհրդատվությունը, լավագույն գործելակերպը, տեղեկությունների փոխանակումը, կարողությունների զարգացմանն աջակցելը, ինստիտուցիոնալ ամրապնդումը և աջակցության գործիքները: ԵՄ-ն նաև կհամագործակցի համախոհ գործընկերների հետ՝ Հայաստանին տրամադրվող աջակցության համակարգումն ապահովելու և «Թիմ Եվրոպա» մոտեցման կիրառումն ապահովելու համար, որով միավորվում են ԵՄ-ի, դրա անդամ պետությունների, Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) , Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) ու այլ շահագրգիռ գործընկերների ռեսուրսները: ԵՄ-ի համապատասխան ֆինանսական գործիքները կնպաստեն Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի իրականացմանը: Այնուհանդերձ, Օրակարգն ինքնին ֆինանսական ծրագրային փաստաթուղթ չէ և չի փոխարինում կողմերի կազմած ծրագրերին:

Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգում նշված առաջնահերթությունների իրականացմանը նպաստելու համար Եվրոպական հանձնաժողովը ներկայացրել է Հայաստանի համար Դիմակայունության և աճի ծրագիրը՝ 2024-2027 թվականների համար 270 միլիոն եվրո արժողությամբ օժանդակության փաթեթ: Դիմակայունության և աճի ծրագրի համաձայն՝ ԵՄ-ն կտրամադրի՝ 1) 200 միլիոն եվրո դրամաշնորհային օժանդակություն՝ սոցիալ-տնտեսական օրակարգին և ԵՄ-ի հետ առավել սերտ ոլորտային համագործակցությանն աջակցելու համար, և 2) 70 միլիոն եվրո ներդրումային դրամաշնորհներ՝ առևտրի, էներգետիկայի և տրանսպորտային կապի ոլորտներում պետական և մասնավոր ներդրումները մոբիլիզացնելու և մասնավոր հատվածն ամրապնդելու նպատակով: Օժանդակությամբ նաև ամրապնդվում է Սևծովյան տարածաշրջանում ԵՄ ներգրավվածությունը<sup>45</sup>:

45 Տե՛ս ավելին [https://enlargement.ec.europa.eu/joint-communication-european-parliament-and-council-european-unions-strategic-approach-black-sea\\_en](https://enlargement.ec.europa.eu/joint-communication-european-parliament-and-council-european-unions-strategic-approach-black-sea_en)

### Ռազմավարական օրակարգի կարճաժամկետ և միջնաժամկետ առաջնահերթությունները

Կայունության, կապակցվածության և բարիդրացիական հարաբերությունների ձգտումը Հայաստանի և Եվրոպական միության համար ընդհանուր նպատակ է: Ձևավորման պահից Եվրոպական միությունն իր էությունը եղել է խաղաղության նախագիծ՝ հիմնադրված Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նոր հակամարտությունները կանխելու և երկարաժամկետ համագործակցություն խթանելու նպատակով: Այդ փորձն ու մոդելը շարունակում են պահպանել իրենց բարձր արդիականությունը՝ Հարավային Կովկասում խաղաղության և կայունացման ուղիները դիտարկելիս: Խաղաղությունը կազմում է Եվրոպական միության ինքնության և արտաքին գործողությունների առանցքային բաղադրիչը: ԵՄ-ն ձևավորվել է պատմական հակամարտությունները հաղթահարելու նպատակով և իրապես հաջողել է նախկին հակառակորդների միջև հակամարտությունը համագործակցության վերածելու գործում: Հաջողական ընդլայնումների և հարևանության քաղաքականության միջոցով Միությունն աստիճանաբար ընդարձակել է խաղաղության, կայունության և բարեկեցության այս յուրահատուկ տարածքը: Այս համատեքստում ԵՄ-ն առանձնահատուկ կարևորություն է տալիս հարևան Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղության, կայունության և կապակցվածության ամրապնդմանը:

Եվրոպական միությունը ողջունեց Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության համաձայնագրի նախաստորագրումը, որն իրականացվել է Վաշինգտոնում՝ 2025 թ. օգոստոսի 8-ին, և այն որակեց որպես խաղաղության գործընթացի կարևոր հանգրվան:

Հայաստանյան հանրության, այդ թվում՝ սփյուռքի համար խաղաղությունը ոչ միայն ռազմավարական նպատակ է, այլև խորապես արմատավորված հասարակական ձգտում: Այս առումով հատկապես ուշագրավ է Հայաստանի կառավարության շեշտադրումը խաղաղության ինստիտուցիոնալացման վրա՝ «TRIPP»-ի և այլ վստահության ամրապնդման միջոցառումների միջոցով: Հետևաբար Եվրոպական միության որդեգրած մոտեցումը պրագմատիկ է, և Միությունը պատրաստակամ է աջակցել գործընթացին՝ գործի դնելով իր քաղաքական, ֆինանսական և տեխնիկական գործիքակազմը՝ ներառյալ ներդրումային և կապակցվածության ծրագրերը, ինչպես նաև կողմերի միջև երկխոսության ու վստահության ամրապնդման հարթակները:

Կապակցվածությունը կարող է դառնալ այս ներգրավվածության առանցքային հենասյուններից մեկը: Եվրոպական միության կողմից վերջերս ընդունած ԵՄ Սևծովյան ռազմավարությունը ստեղծում է տարածաշրջանային համագործակցության ընդլայնման նոր շրջանակ, և Եվրոպական միությունը խրախուսում է Հայաստանի Հանրապետության ակտիվ մասնակցությունը այս գործընթացին: Կապակցվածությունը պետք է ընկալվի լայն և ներառական իմաստով՝ կապելով ոչ միայն Հարավային Կովկասը, այլ նաև ավելի լայն տարածաշրջանները՝ ներառյալ Կենտրոնական Ասիան, Չինաստանը, Միջին միջանցքը և Եվրոպան: Ձևավորվող աշխարհաքաղաքական և տնտեսական այս միջավայրում Հայաստանը լավ դիրքավորված է՝ ունենալու կառուցողական և ռազմավարական դեր:

Կարևոր է ընդգծել, որ կապակցվածությունը չի սահմանափակվում միայն ֆիզիկական ենթակառուցվածքներով: Այն ներառում է նաև համայնքների միջև սոցիալական, տնտեսական և մարդկային կապերի ամրապնդումը: Փոխազդեցությունը, փոխշահավետությունը և համատեղ տնտեսական հնարավորությունները խթանելու միջոցով կապակցվածության նախաձեռնությունները կարող են նպաստել խաղաղության «պտուղները» մարդկանց կյանքում շոշափելի դրական փոփոխությունների վերածելուն:

Այս համատեքստում, **Ռազմավարական օրակարգի առաջնահերթություններն են** ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքները, որոնց ուղղությամբ ԵՄ-ն բարձր է գնահատում Հայաստանի հանձնառությունը, ինչպես նաև այս ուղղությամբ զգալի առաջընթացը՝ հաշվի առնելով չափազանց բարդ տարածաշրջանային իրավիճակը, որին Հայաստանը ներկայումս առերեսվում է: Առանցքային առաջնահերթությունների շարքում են սոցիալ-տնտեսական զարգացումը, առևտրի դիվերսիֆիկացումը, կայունությունը և դիմակայունության բարձրացումը, աշխարհաքաղաքական և տարածաշրջանային մարտահրավերների հասցեագրումը, ինչպես նաև թիրախավորված հիբրիդային և այլ սպառնալիքների վերացումը: Վիզայի ազատականացման շուրջ երկխոսությունը ևս նշված է որպես կարևոր համատեղ առաջնահերթություն: Համաձայն ԵՄ գնահատման՝ Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել այնպիսի առանցքային ոլորտներում բարեփոխումների իրականացման գործում, ինչպիսիք են արդարադատությունը, կոռուպցիայի դեմ պայքարը և իրավունքի գերակայության ապահովումը, խոսքի ազատությունը և ԶԼՄ-ների ազատությունը, ոստիկանության բարեփոխումները և ժողովրդավարական հաստատությունների ամրապնդումը (օրինակ՝ ստեղծելով ներքին գործերի նախարարություն), միգրացիայի և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում բարեփոխումները:

Միաժամանակ, տարածաշրջանի անվտանգային իրավիճակը մնում է անկայուն, և Հայաստան-ԵՄ գործընկերության սույն ռազմավարական օրակարգում, որպես համագործակցության նոր ոլորտ, ներառված են անվտանգությունը և պաշտպանությունը, որոնց նպատակը Հայաստանի դիմակայունությունը, անվտանգությունը և կայունությունը բարձրացնելն է (օրինակ՝ նախորդ բաժիններում քննարկված ԵՄ Եվրոպական խաղաղության գործիքակազմի միջոցառումները):

ԵՄ-ն մշտապես պատրաստ է աջակցել Հայաստանին և առաջիկա տարիներին անհրաժեշտ կլինի լրացուցիչ ուշադրություն դարձնել 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ռազմական հարձակման հետևանքով Լեռնային Ղարաբաղից ավելի քան 115.000 տեղահանված հայերի կարիքների բավարարմանը և նրանց՝ սոցիալ-տնտեսական համակարգում ներառմանը:

Հայաստան-ԵՄ գործընկերության այս ռազմավարական օրակարգը նպաստում է տնտեսական, առևտրային և էներգետիկ դիվերսիֆիկացմանը և առանցքային ոլորտներում նորմատիվ իրավական ակտերի հետագա համապատասխանեցմանը՝ առավել սերտ տնտեսական համագործակցության համար պայմաններ ստեղծելու նպատակով: Դրա նպատակն է նաև ամրապնդել համագործակցությունն այն ոլորտներում, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայաստանի սոցիալ-տնտեսական դիմակայունության համար, ինչպես նաև ավելացնել ներդրումները: Սույն ուղղությունն առանձնահատուկ կարևորություն ունի՝ հաշվի առնելով, որ Հայաստանյան փորձագիտական շրջանակների և բիզնես ոլորտի բազմաթիվ ներկայացուցիչներ պահպանողական/սկեպտիկ մոտեցում ունեն ԵՄ շուկայի հետ տնտեսական կապերի և առևտրային կապակցվածության խորացման միջոցով տնտեսական դիվերսիֆիկացման հնարավորության նկատմամբ: Այդ իսկ պատճառով ակնկալվում է, որ Ռազմավարական օրակարգը կնպաստի երկկողմ առևտրի ավելի բարձր մակարդակի հասնելուն և կոյուրացնի հայկական ապրանքների մուտքը ԵՄ միասնական շուկա՝ ստեղծելով ավելի կանխատեսելի և աջակցող գործնական պայմաններ:

Հայաստան-ԵՄ գործընկերության սույն ռազմավարական օրակարգը կլրացնի Արևելյան գործընկերության քաղաքականության շրջանակը, որը մնում է արժեքավոր գործիք՝ Հայաստան-ԵՄ հարաբերությունների ամրապնդման և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում տարածաշրջանային համագործակցության համար: Հայաստան-ԵՄ համագործակցությամբ կապահովվի գլոբալ քաղաքականության նպատակների իրագործումը, ներառյալ՝ «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզի համաձայնագիրը և Կայուն զարգացման նպատակների 2030 թվականի օրակարգը, ինչպես նաև դրա Կայուն զարգացման 17 նպատակները: Համագործակցությունը

կնպաստի միջազգային կանոնահեն կարգի ամրապնդմանը և կօգնի Եվրոպային համաշխարհային հարթակում դառնալ առավել ուժեղ: Կլիմայի և ԿԶՆ-ների (Կայուն զարգացման նպատակների) բաղադրիչը կարևոր նշանակություն ունի հայկական կողմի համար՝ կայուն աճի և կլիմայի փոփոխությանն արձագանքելու ուղղությամբ իր ջանքերն առաջ մղելու տեսանկյունից, քանի որ դրանք ընդհանուր առմամբ կազմում են Հայաստանում իրականացվող միջազգային զարգացման ծրագրերի կարևոր ուղղություն (սովորաբար՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի միջոցով), իսկ ԵՄ-ն սովյալ ոլորտում առանցքային դոնոր է:

Ռազմավարական օրակարգում, որպես առաջնահերթության կարգով հասցեագրվելիք բարեփոխումների ոլորտներ, ներառված են հետևյալը՝

1. Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ և արդյունավետ կառավարում,
2. ազատություն, շարժունակություն և անվտանգություն,
3. արտաքին և անվտանգային քաղաքականություն,
4. տնտեսական և ոլորտային համագործակցություն,
5. առևտուր և առևտրին առնչվող հարցեր,
6. մարդկանց միջև շփումներ:

Ակնհայտ է, որ բարեփոխումների յուրաքանչյուր ուղղություն ունի իրականացման իրապես նշանակալի մարտահրավերներ՝ պայմանավորված քաղաքական կամքի առկայության մակարդակով, կարողությունների և փորձագիտական ներուժի պակասով, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ: Կարևոր է, որպեսզի այս մարտահրավերները համատեղ ջանքերով արագ և արդյունավետ կերպով հասցեագրվեն Եվրոպական միության, Հայաստանի կառավարության և քաղաքացիական հասարակության կողմից:

ԵՄ-ի կողմից Հայաստանի կառավարությանը հասցեագրվելիք հստակ ուղերձներից մեկը կարող է լինել այն, որ իրականացման գործընթացի ձգձգումը կամ դանդաղեցումը՝ պայմանավորված 2026 թվականի խորհրդարանական ընտրություններով, չի կարող ընդունելի համարվել: Հայաստանն արդեն իսկ զգալի ժամանակ է կորցրել ՀԸԳՀ-ի կիրառման ուղղությամբ՝ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառների հետևանքով, որոնք հաճախ մատնանշվել են իշխանությունների կողմից: Եթե թե՛ ՀԸԳՀ-ն, թե՛ նոր Ռազմավարական օրակարգը պետք է ծառայեն Հայաստանին և նրա քաղաքացիներին ԵՄ-ին մոտեցնելու նպատակին, ապա այս փուլում այլևս չպետք է լինեն հավելյալ և անպատեհ ձգձգումներ:

Երկրորդ՝ չափազանց կարևոր է, որ բոլոր համապատասխան ոլորտային նախարարություններում ձևավորվեն համարժեք ինստիտուցիոնալ կառուցվածքներ՝ Եվրոպական ինտեգրման վարչությունների (կամ համարժեք մասնագիտացված ստորաբաժանումների) տեսքով, որպեսզի կուտակվի ինստիտուցիոնալ հիշողություն և ապահովվի ՀԸԳՀ-ի ու նոր Ռազմավարական օրակարգի նպատակային՝ մասնագիտացված իրականացումը: Գործող մոտեցումը, երբ ԵՄ-ի ջանքերով առաջ մղվող բարեփոխումների իրականացումը հաճախ համակցվում է փոխնախարարների բազմաթիվ այլ գործառույթների հետ և դրվում է նրանց վրա, փորձով ապացուցել է իր անբավարար

արդյունավետությունը, հատկապես՝ Արդարադատության նախարարության պարագայում: Քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց հաճախակի փոփոխությունները չպետք է խոչընդոտեն կամ թուլացնեն բարեփոխումների տեմպը և շարունակականությունը:

Երրորդ՝ կարևոր է նպատակային կերպով օգտագործել տարածաշրջանային այլ երկրների (մասնավորապես Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի) ասոցացման գործընթացի ընթացքում կուտակված հարուստ փորձը: Այդ երկրների քաղաքացիական հասարակության շրջանակում կան ճանաչված նախկին պետական ծառայողներ և դիվանագետներ, որոնք հաջողությամբ առաջնորդել են իրենց պետությունները դեպի ԵՄ թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելու փուլը: Հայաստանի կառավարության կողմից մեծ բացթողում կլինի, եթե այդ փորձը չադապտացվի և չօգտագործվի հայկական համատեքստում:

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը կարող է առանցքային դեր ունենալ այս հարցում՝ ապահովելով կապեր համապատասխան փորձագիտական շրջանակների հետ և, որոշակի կարողությունների զարգացումով ու ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում, հանդես գալ նաև որպես կառավարության համար արժեքավոր փորձագիտական աջակցություն տրամադրող դերակատար:

# Վերջաբան

Հայաստանի և Եվրոպական միության միջև Գործընկերության ռազմավարական օրակարգը, ինչպես նշվել է սույն ուսումնասիրության մեջ, նախատեսված էր որպես փաստաթուղթ, որն ընդլայնում և զարգացնում է համագործակցությունը, որը մեկնարկել է առաջ է ընթացել Հայաստանի ու Եվրոպական միության միջև 2021 թ. մարտի 1-ից՝ ՀԸԳՀ-ի ամբողջական ուժի մեջ մտնելուց հետո: Այն հաշվի է առել Հայաստանի առանձնահատուկ կարիքները, որոնք ի հայտ են եկել 2020 թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմի ավարտից հետո, և հատկապես՝ 2023 թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից հայերի բռնի տեղահանության հետևանքով: Թեև 2025 թվականի ավարտին Հայաստան–ԵՄ գործընկերությունը գնահատվում է որպես «նոր և ավելի հավակնոտ փուլ» մտնող<sup>46</sup>, ՀԸԳՀ-ն շարունակում է մնալ գլխավոր «մայր» փաստաթուղթը՝ իր պարտավորությունների շրջանակով և այդ պարտավորությունների իրականացումն ու մոնիթորինգը ապահովող ինստիտուցիոնալ կառուցվածքով:

Կառավարության, Եվրոպական միության և քաղաքացիական հասարակության շրջանակներում գործող դերակատարների շրջանում լայնորեն տարածված է այն ընկալումը, որ ՀԸԳՀ-ի կիրառման գործընթացում առկա են ուշացումներ: ՀԸԳՀ-ի կիրառման ընթացքում առաջացող մարտահրավերների թվում Կառավարությունը նշել է ԵՄ իրավական ակտերին մոտարկում ապահովելու համար վարչարարական կարողությունների անբավարար մակարդակը և տեխնիկական աջակցության անհրաժեշտությունը, խիստ վերջնաժամկետները և ռեսուրսային սահմանափակումները, ԵՄ արագ զարգացող կարգավորումների հետ համընթաց առաջ շարժվելու ոչ բավարար արագությունը, ճանապարհային քարտեզով սահմանված գործողությունների իրականացման մասով Արդարադատության նախարարության և ղրորտային նախարարությունների միջև մասնագիտական և փորձագիտական համակարգման/օժանդակման ոչ բավարար մակարդակը:

Քաղաքացիական հասարակությունը վերոնշյալ ցանկին հավելում է նաև մի շարք այլ խնդիրներ, մասնավորապես՝ ՀԸԳՀ-ի կիրարկման և դրա մոնիթորինգի ղրորտում ԵՄ աջակցության արդյունավետության ու արդյունքաբերության անբավարար մակարդակը, ինչպես նաև ԵՄ կողմից այդ աջակցության որակի նկատմամբ վերահսկողության ոչ բավարար լինելը, ՀԸԳՀ-ի կիրարկման մոնիթորինգի գործառույթ իրականացնող նպատակային քաղաքացիական հասարակության կառուցվածքների ֆինանսավորման անբավարարությունը՝ ներառյալ ԵՄ–Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակը և Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի հայկական հարթակը և այլ հարակից խնդիրներ, որոնք քաղաքացիական հասարակության գնահատմամբ ազդում են ՀԸԳՀ-ի կիրառման համակարգվածության և հաշվետվողականության վրա:

Ակնհայտ է, որ քաղաքական պլանավորման իմաստով Եվրոպական միությունը ցուցաբերել է աննախադեպ ստեղծագործական մոտեցում, ինչը թույլ է տվել իր պաշտոնյաների կողմից Հայաստանին ավելի մեծ աջակցություն ցուցաբերելու մասին բարձր մակարդակով հնչեցված խոստումները, ինչպես նաև՝ Հայաստանի ժողովրդավարական ուժերի (թե՛ կառավարության ներսում, թե՛ դրանից դուրս) ԵՄ ինտեգրման խորացման և Հայաստանի եվրոպական ապագայի վերաբերյալ հայտարարված քաղաքական կամքը վերածել ամրագրված քաղաքական հանձնառությունների: Այս գործընթացում անհրաժեշտ է, որպեսզի բոլոր կողմերը շարունակեն համատեղ աշխատանքը՝ կառուցողականության, բարի կամքի, պատշաճ ուշադրության, պրոֆեսիոնալիզմի և ամուր գործընկերության ոգով՝ միտված ստանձնած պարտավորությունների փաստացի իրականացմանը: Միայն այդպես հնարավոր կլինի հարթել ԵՄ անդամակցության ուղղությամբ Հայաստանի ճանապարհը՝ ապահովելով իրական և հետևողական առաջընթաց:

46 ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հայտարարությունը ԵՄ–Հայաստան Գործընկերության խորհրդի 6-րդ նիստից հետո (02.12.2025)՝ [https://www.mfa.am/en/press-conference/2025/12/02/Armenia\\_EU\\_Statement/13650](https://www.mfa.am/en/press-conference/2025/12/02/Armenia_EU_Statement/13650)

